

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԻՇԽԱՆՑԱՆՆ ԸՆԴԴԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 5297/16)

ՎՃԻՌ

5-րդ հոդվածի 1-ին կետ • Դիմումատուի ձեռքակալությունը էլեկտրաէներգիայի թանկացման դեմ իրականացվող՝ գլխավոր պետական ճանապարհի փակմամբ ուղեկցվող նստացույցը ցրելուց հետո • Ավելի քան յոթ ժամ ուստիկանության բացառիկ հսկողության տակ գտնվելը, երբ հանգամանքները հավասարագոր են եղել ազատությունից զրկմանը • 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետին համապատասխան ձեռքակալության հիմքեր չկան • Զանգվածային ձեռքակալություն՝ առանց դիմումատուի գործողություններում որեւէ հանցավորության անհատական գնահատման եւ առանց նրա կողմից 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին հակասող հանցագործություն կատարելու ողջամիտ կասկած ունենալու • Ուստիկանությունում արգելանքի տակ պահվելը չի համապատասխանել օրենքով սահմանված կարգին, քանի որ նրա՝ փաստացի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածի մասով ձեռքակալության արձանագրություն չի կազմվել

Պատրաստվել է Քարտուղարության կողմից: Պարտադիր չէ Դատարանի համար:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2025 թվականի փետրվարի 13

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

**Իշխանյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Հինգերորդ բաժանմունք),  
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Մաթիաս Գայոմար [Mattias Guyomar]՝ *Նախագահ,*

Մարիա Էլոսեգի [Maria Elósegui],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Զիլբերտո Ֆելիչի [Gilberto Felici],

Անդրեաս Ցյունդ [Andreas Zünd],

Կատերինա Շիմաչկովա [Kateřina Šimáčková],

Միկոլա Գնատովսկի [Mykola Gnatovskyy]՝ *դատավորներ,*

եւ Վիկտոր Սոլովեյչիկ [Victor Soloveytchik]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի քաղաքացի պրն Հովհաննես Իշխանյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 5297/16),

Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) Կոնվենցիայի 3-րդ հոդվածի (ոստիկանության կողմից նրան արգելանքի տակ պահելը՝ թաց հագուստով եւ առանց հանգստի ժամանակ տրամադրելու) եւ 5-րդ հոդվածի 1-ին կետի եւ 11-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքների մասին ծանուցելու եւ գանգատի մնացած մասն անընդունելի հայտարարելու մասին որոշումը,

կողմերի դիտարկումները,

2025 թվականի հունվարի 21-ին անցկացնելով դոնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործը վերաբերում է զանգվածային նստացույցը ցրելուն եւ այն ցրելուց հետո՝ դիմումատուի ձերբակալությանը: Դիմումատուն վկայակոչել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, 5-րդ հոդվածի 1-ին կետը, 10-րդ, 11-րդ եւ 13-րդ հոդվածները:

#### ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1988 թվականին եւ ապրում է Երեւանում: Նրան ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ պրն Ռ. Ռեւազյանը եւ պրն Ա. Զեյնալյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է կառավարության լիազոր ներկայացուցիչ, Միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ:

I. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐ  
(«ԷԼԵԿՏՐԻԿ ԵՐԵՎԱՆ» ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐ)

5. 2015 թվականի մայիսի 8-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ը (փակ բաժնետիրական ընկերություն) («ՀԷՑ»)՝ տվյալ պահին Հայաստանում էլեկտրաէներգիայի միակ մատակարարը, դիմում է ներկայացրել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)՝ էլեկտրաէներգիայի սակագինը մեկ կիլովատ ժամում 17 ՀՀ դրամով (դրամ) բարձրացնելու համար թույլտվություն ստանալու խնդրանքով:

6. 2015 թվականի հունիսի 17-ին ՀԾԿՀ-ն որոշում է կայացրել թույլատրելու էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացումը 6,93 ՀՀ դրամով, որն ուժի մեջ էր մտնելու 2015 թվականի օգոստոսի 1-ից:

7. Սույն որոշմանն ի պատասխան՝ բարձրացվել են բողոքի ցույցեր: Մասնավորապես 2015 թվականի հունիսի 19-ից Երեւանի Ազատության

հրապարակում քաղաքացիական նախաձեռնությամբ կազմակերպվել են բողոքի ցույցեր՝ հայտնի «Ո՛չ թալանին» անվանմամբ: Յուցարարները յոթանասուներկու ժամ են տվել իշխանություններին՝ ՀԾԿՀ-ի որոշումը կասեցնելու համար:

8. 2015 թվականի հունիսի 22-ի հավաքի շարունակական ուղիղ հեռարձակմամբ (ուղիղ հեռարձակման արխիվացված տարբերակը դեռ կարելի է դիտել «YouTube»-ում) արձանագրվել է հետևյալը<sup>1</sup>. 2015 թվականի հունիսի 22-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, ըստ Հատուկ քննչական ծառայության (ՀՔԾ) անցկացրած հետագա քննության (տե՛ս ստորել՝ 17-րդ եւ 29-րդ պարբերությունները) արդյունքների՝ թվով մոտ հազարի հասնող ցուցարարներ Ազատության հրապարակից երթով շարժվել են դեպի նախագահի նստավայր, սակայն Բաղրամյան 1 հասցեի դիմաց նրանց կանգնեցրել է ոստիկանական շղթան, որտեղ տեղակայված էին մեծ թվով զինված ոստիկաններ: Յուցարարները, ի վերջո, որոշել են նստացույց իրականացնել ճանապարհին, քանի դեռ ՀԾԿՀ-ի որոշումը չի կասեցվել նախագահի կողմից: Բաղրամյան պողոտայի երթեւեկությունն ամբողջովին դադարեցված էր: Երեւանի՝ այդ ժամանակ գործող ոստիկանապետը (Ա.Կ.) եւ նրա տեղակալը (Վ.Օ.) սկսել են բանակցություններ վարել ցուցարարների հետ: Նրանք ցուցարարներին են փոխանցել նախագահի ուղերձը, ըստ որի վերջինս պատրաստ էր ընդունելու հինգ ցուցարարներից բաղկացած պատվիրակություն՝ իրենց մտահոգությունները քննարկելու նպատակով: Նրանք մի քանի անգամ կրկնել են այդ առաջարկը՝ պնդելով, որ այդպիսով հնարավոր կլինի անդրադառնալ խնդրին՝ միեւնույն ժամանակ խուսափելով իրավիճակի հնարավոր սրումից: Ոստիկանությունը մի քանի անգամ նշել է, որ ցուցարարները խափանել են Բաղրամյան պողոտայի (Երեւանի գլխավոր մայրուղիներից մեկը) երթեւեկությունը՝ խախտելով հասարակական կարգը. նրանք նաեւ նշել են, որ վերջիններս չեն կատարել ցանկացած ցույցի համար նախապես ծանուցում ներկայացնելու պահանջը, եւ որ իրենց կողմից (որպես ցույցի փաստացի կազմակերպիչներ) տվյալ պահանջը չկատարելը

<sup>1</sup> <https://www.youtube.com/watch?v=fztcPjL1TDs> (վերջին անգամ մուտք է եղել 2024 թվականի դեկտեմբերի 18-ին):

հանգեցրել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, տե՛ս ստորել՝ 57-րդ պարբերությունը): Ոստիկանությունը ցուցարարներին նաեւ տեղեկացրել է, որ իրենց թույլ կտրվի վերադառնալ Ազատության հրապարակ եւ այնտեղ շարունակել իրենց բողոքի ակցիան՝ առանց որեւէ խոչընդոտի: Ցուցարարները, սակայն, հաստատակամ էին այն հարցում, որ ճանապարհը ազատելու են միայն այն դեպքում, երբ ՀԾԿՀ-ի որոշումը կասեցվի նախագահի կողմից: Նրանք սկսել են հայրենասիրական երգեր երգել, կարգախոսներ հնչեցնել եւ բանաստեղծություններ արտասանել: Նրանք դադարել են աղմկել միայն ժամը 00:30-ից մինչեւ գիշերվա ժամը 1-ն ընկած ժամանակահատվածում՝ գիշերային «հանգիստ ժամերի» ընթացքում չաղմկելու եւ անհանգստություն չպատճառելու վերաբերյալ ոստիկանության կողմից մի քանի նախազգուշացում ստանալուց հետո:

9. 2015 թվականի հունիսի 22-ին հայցվոր կողմը հարուցել է թիվ 14203515 քրեական գործը՝ Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան (տե՛ս ստորել՝ 44-րդ պարբերությունը): Հետեւաբար Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (ՔԿ) համապատասխան ստորաբաժանումը քննություն է սկսել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամը 19:30-ից սկսած՝ Բաղրամյան պողոտայում կազմակերպվել է ապօրինի եւ տեւական ցույց, երթ եւ նստացույց, որի ընթացքում ցուցարարները խոչընդոտել են երթեւեկությունը, աղմկել, խախտել հասարակական կարգը, ինչպես նաեւ խախտվել են այլ անձանց ազատ տեղաշարժն ու սահմանադրական իրավունքները, ինչպես նաեւ կոպտորեն խախտվել է հասարակական կարգը: Սակայն, ըստ էության, այդ տեղեկությունը հրապարակվել է միայն հաջորդ օրը: Դատարանին չեն տրամադրել համապատասխան որոշումը:

10. «YouTube»-ում տեղադրված վերոնշյալ տեսանյութը վկայում է նաեւ այն մասին, որ ցույցն իրականացվել է առանց առաջնորդների եւ ոչ

աստիճանակարգված ոճով: Բացառությամբ 22երի նետման միակ դեպքի, որը քննադատվել է կազմակերպիչների կողմից տեղում, ցուցարարները ոչ մի տեսակի բռնություն չեն գործադրել: Փաստորեն, ցույցի ժամանակ՝ ինչ-որ պահի, հենց ինքը՝ Վ.Օ.-ն է հավաքված լրագրողների առջեւ հայտարարել, որ ցույցը խաղաղ է: Այնուամենայնիվ, կարճ ժամանակ անց ոստիկանության ավագ սպաները, այդ թվում՝ Վ.Օ.-ն ցուցարարներին հայտնել են, որ իրենց վարքագիծը պարունակում է քրեական հանցագործության տարրեր, այն է՝ խուլիգանություն (տե՛ս ստորել՝ 44-րդ պարբերությունը):

11. Ցուցարարները մոտ տասը ժամ ճանապարհը փակ են պահել. նրանցից ոմանք նույնիսկ քնել են ճանապարհին: 2015 թվականի հունիսի 23-ին՝ առավոտյան ժամը 5-ի սահմաններում, Երեւանի փոխոստիկանապետ Վ.Օ.-ն բարձրախոսով դիմել է ցուցարարներին, որոնց թիվը, ըստ ավելի ուշ իրականացված քննության արդյունքների (տե՛ս ստորել՝ 17-րդ եւ 29-րդ պարբերությունները), հասնում էր մոտ հինգհարյուրի: Նա հրամայել է ցուցարարներին անհապաղ դադարեցնել իրենց անօրինական գործողությունները եւ բողոքի ակցիան տեղափոխել Ազատության հրապարակ կամ իրենց ընտրած ցանկացած այլ վայր (պայմանով, որ այն բանուկ փողոց չի լինի), հակառակ դեպքում ոստիկանությունը կկիրառեր ֆիզիկական ուժ եւ «հատուկ միջոցներ» (տե՛ս ստորել՝ 73-րդ պարբերությունը): Ցուցարարները, ի պատասխան նրա հրահանգի, սուլել են եւ «կենդանի վահան» ստեղծելու նպատակով ձեռք ձեռքի են տվել՝ մեջքով շրջվելով դեպի ոստիկանական շղթան: Նա կրկնել է այդ պահանջը մոտ հինգ րոպե անց՝ ցուցարարներին տալով տասը րոպե՝ ցրվելու համար: Վ.Օ.-ի հայտարարությունից հետո ջրցան մեքենան դանդաղ մոտեցել է ցուցարարներին: Վերոնշյալ քննության արդյունքների համաձայն՝ մոտ տասը րոպե անց ոստիկանությունը ջրցան մեքենայից (միաժամանակ) երկու շիթ ջուր է բաց թողել ցույցի Կենտրոնական հատված<sup>2</sup>: Ջրի շիթերը տապալել են ցուցարարներին՝ նրանցից մի քանիսին մի կողմ շարտելով: Ցուցարարները, այնուամենայնիվ, շարունակել են մնալ փողոցում, իսկ նրանցից ոմանք նույնիսկ ոտքի են կանգնել եւ

<sup>2</sup> <https://www.youtube.com/watch?v=QI7bhe-kF4M> (12:36-ից սկսած, վերջին անգամ մուտք է եղել 2024 թվականի դեկտեմբերի 18-ին):

միջնամատ ցույց տվել ոստիկաններին: Կարճ ժամանակ անց, երբ ջրցան մեքենան դեռ շարունակում էր կրակել, մոտեցել են քաղաքացիական հագուստով ծառայողներ՝ ոմանք «ոստիկանություն» բառը կրող թեւկապերով, ինչպես նաեւ ոստիկանական համազգեստով ծառայողներ, եւ սկսել են բռնի կերպով բաժանել եւ ձերբակալել ցուցարարներին. ոմանք փորձել են դիմադրել, ինչը հանգեցրել է լարվածության սրմանը: Ոստիկանության կողմից կիրառվող միջոցներից էին ցուցարարներին գետին տապալելը, նրանց ձեռքերը ոլորելը, գետնին քարշ տալը եւ նրանց ստիպողաբար ոստիկանական ֆուրգոններ<sup>3</sup> տեղավորելը: Ի վերջո, ոստիկանությունը ցրել է բողոքի ակցիան եւ մաքրել ճանապարհը՝ ձերբակալելով ցուցարարներին<sup>4</sup>: Ըստ քննության արդյունքների՝ ցուցարարներից մի քանիսը փախուստի են դիմել եւ հավաքվել Ազատության հրապարակում, սակայն նրանք նույնպես ձերբակալվել են:

12. Վերոնշյալ հետաքննության համաձայն (տե՛ս ստորել՝ 17-րդ եւ 29-րդ պարբերությունները)՝ ցույցի ավելի քան երկու հարյուր մասնակիցներ, ներառյալ՝ դիմումատուն, բերման են ենթարկվել ոստիկանության տարբեր բաժիններ՝ խուլիգանության հանցագործության կասկածանքով: Այնուհետեւ ցուցարարները ՔԿ-ի քննիչների կողմից որպես վկա հարցաքննվել են թիվ 14203515 քրեական գործի շրջանակներում (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը) եւ ստիպված են եղել ակոռիով եւ թմրանյութերի համապատասխանաբար երկու թեստ հանձնել: Նրանցից ոչ մեկին մեղադրանք չի առաջադրվել որեւէ քրեական հանցագործություն կատարելու համար, եւ բոլորը ազատ են արձակվել միեւնույն օրը՝ մինչ երեկո (տե՛ս ստորել՝ 19-րդ պարբերությունը):

13. Տվյալ իրադարձությունը լայնորեն լուսաբանվել է միջազգային լրատվամիջոցների կողմից, եւ որոշ միջազգային կազմակերպություններ քննադատել են ցույցը ցրելու համար ուժի կիրառումը՝ կոչ անելով ներպետական մարմիններին դեպքի առնչությամբ մանրակրկիտ քննություն իրականացնել (տե՛ս ստորել՝ 88-89-րդ պարբերությունները):

<sup>3</sup> [https://www.youtube.com/watch?v=3kpNno\\_LMj0](https://www.youtube.com/watch?v=3kpNno_LMj0) (8-րդ բողոքից սկսած, վերջին անգամ մուտք է եղել 2024 թվականի դեկտեմբերի 18-ին):

<sup>4</sup> <https://www.youtube.com/watch?v=Qb9Sn5RM1ZE> (4-րդ բողոքից սկսած, վերջին անգամ մուտք է եղել 2024 թվականի դեկտեմբերի 18-ին):

14. Չպարզված օրը թիվ 14203515 քրեական գործը (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը) փակվել է՝ ցուցարարների գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով: Դիմումատուի փաստարկների համաձայն (չեն վիճարկվել Կառավարության կողմից)՝ համապատասխան որոշումն ընդունվել է 2015 թվականի հոկտեմբերի 26-ին:

15. 2015 թվականի հունիսի 23-ի երեկոյան ցույցը ցրելու վայրում մի քանի հազար մարդ էր հավաքվել, եւ նստացույցերը շարունակվել են Բաղրամյան պողոտայում մինչեւ 2015 թվականի հուլիսի 6-ը, ինչը հանգեցրել է Բաղրամյան պողոտայում երթևեկության դադարեցմանը: Սեպտեմբեր ամսին ավելի փոքրամասշտաբ նստացույց է անցկացվել:

## II. ՎԵՐՈՆՇՅԱԼ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

16. 2015 թվականի հունիսի 23-ին ոստիկանությունը ծառայողական քննություն է սկսել նստացույցը ցրելու ժամանակ ոստիկանության գործողությունների օրինականության վերաբերյալ: Արդյունքում, ոստիկանության տասներկու ծառայողների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր: Բացի այդ, ինչպես պարզվել է քննությամբ, 2015 թվականի հունիսի 23-ին վնասվածք<sup>5</sup> է ստացել ոստիկանության տասնմեկ ծառայող: Քննությունը կասեցվել է թիվ 62217915 քրեական գործը հարուցելուց հետո (տե՛ս ստորել՝ 17-րդ պարբերությունը):

17. 2015 թվականի հուլիսի 2-ին ՀԲԾ-ն հարուցել է թիվ 62217915 քրեական գործը՝ Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասով (Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելը պաշտոնատար անձի կողմից՝ պաշտոնական դիրքն օգտագործելով), 185-րդ հոդվածի 1-ին մասով (Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) եւ 309-րդ հոդվածի 2-րդ մասով (Պաշտոնական լիազորություններն անցնելը, տե՛ս ստորել՝ 46-րդ

<sup>5</sup> Ծառայողական քննությանը վերաբերող փաստաթղթերից մեկում նշված է, որ վնասվածք ստացած ոստիկանների թիվը տասնչորսն է, սակայն նշված փաստաթղթում նշված չեն ոստիկանների ստացած վնասվածքների ամսաթիվը կամ հանգամանքները:



պարբերությունը): Մասնավորապես տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2015 թվականի հունիսի 23-ին եւ դրան հաջորդող օրերին անցկացված նստացույցերը ցրելու գործողություններում ներգրավված՝ պետությանը հատուկ ծառայություններ մատուցող անձինք բռնության են ենթարկել ցուցարարներին եւ մի շարք լրագրողների՝ վնասվածքներ պատճառելով վերջիններիս, ինչպես նաեւ վնասել կամ ոչնչացրել են լրագրողների սարքերը:

18. 2015 թվականի հուլիսի 6-ին ՀՔԾ-ն դիմել է ոստիկանություն՝ 2015 թվականի հունիսի 23-ի նստացույցը ցրելու հանգամանքների վերաբերյալ տեղեկություն ստանալու եւ պարզելու համար, թե արդյոք կիրառվել է որեւէ ներքին ընթացակարգ՝ ոստիկանության գործողությունների օրինականությունը պարզելու նպատակով:

19. 2015 թվականի հուլիսի 29-ին փոխոստիկանապետը պատասխանել է, որ ցույցի կազմակերպիչները չեն կատարել ցանկացած ցույցի մասին նախապես ծանուցելու վերաբերյալ պահանջը: Արդյունքում, ոստիկանությունը չի տեղեկացվել, ի թիվս այլնի, ցույցի մեկնարկի վայրի եւ նպատակակետի, ցույցի մեկնարկի եւ ավարտի ժամանակի, ինչպես նաեւ ցույցի երթուղու եւ դրա ժամանակացույցի մասին: Անօրինական բողոքի երթից անմիջապես հետո ոստիկանությունը կազմակերպիչներին տեղեկացրել է, որ նրանք Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով վարչական իրավախախտում են կատարել (տե՛ս ստորեւ՝ 57-րդ պարբերությունը). ոստիկանությունը հայտարարությունը տարածել էր ցույցի իրականացումը օրենքի պահանջներին համապատասխանեցնելու եւ ցուցարարների վարքագծի վրա ազդելու նպատակով, սակայն ապարդյուն: Երեկոյան ժամը 19:00-ից ցուցարարները փակել են Բաղրամյան պողոտան՝ նստացույց իրականացնելով երթեւեկելի հատվածում: Ոստիկանությունը բանակցություններ է սկսել. մասնավորապես նրանք առաջարկել են կազմակերպիչներին պատվիրակություն ուղարկել Հանրապետության նախագահի հետ հանդիպելու համար: Առաջարկը մերժվել է: Դրանից հետո ոստիկանությունը պահանջել է, որ ցուցարարները բացեն Բաղրամյան պողոտան երթեւեկության

համար եւ վերադառնան Ազատության հրապարակ: Տվյալ առաջարկը նույնպես մերժվել է՝ ցուցարարների վրա կազմակերպիչների ունեցած ազդեցության պատճառով: 2015 թվականի հունիսի 19-ից սկսված եւ 2015 թվականի հունիսի 23-ին՝ ժամը 5:30-ին ցրված նստացույցի առնչությամբ ոստիկանությունը չի միջամտել ցույցի անցկացմանը, ուժ չի կիրառել եւ կազմակերպիչներին Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան վարչական պատասխանատվության չի ենթարկել: Ավելի շուտ, ոստիկանությունը շարունակել է պահպանել հասարակական կարգը եւ ապահովել ցուցարարների անվտանգությունը՝ այդպիսով պահպանելով «Հավաքների ազատության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները (տե՛ս ստորել՝ 66-րդ պարբերությունը): Անօրինական ցույցի արդյունքում Բաղրամյան պողոտայում երթեւեկությունը դադարեցվել է, ինչը հանգեցրել է երթեւեկության լուրջ խափանումների նաեւ մյուս փողոցներում: Բացի այդ, հարեւան շենքերի բնակիչները երկու տասնյակ բողոք են ներկայացրել ճանապարհային երթեւեկության խախտման եւ գիշերային «հանգիստ ժամերի» ընթացքում ցուցարարների ստեղծած աղմուկի վերաբերյալ: Հաշվի առնելով ցույցի շարունակական բնույթը, այն փաստը, որ կազմակերպիչները եւ ցուցարարները խախտել են համապատասխանաբար «Հավաքների ազատության մասին» օրենքի 28-րդ եւ 29-րդ հոդվածները (տե՛ս ստորել՝ 64-րդ եւ 65-րդ պարբերությունները), ինչպես նաեւ անտեսել են երթեւեկության մասնակիցների ազատ տեղաշարժի իրավունքի անհամաչափ սահմանափակումը դադարեցնելու անհրաժեշտությունը, ոստիկանությունը, նշված օրենքի 33-րդ հոդվածի համաձայն (տե՛ս ստորել՝ 67-րդ եւ 68-րդ պարբերությունները), երկու անգամ նախազգուշացրել է ցուցարարներին. նրանց տրվել է տաս բուլե ժամանակ՝ ցույցը կամավոր դադարեցնելու համար, հակառակ դեպքում նրանք ցրելու էին այն, այդ թվում՝ ուժի կամ «հատուկ միջոցների» կիրառմամբ: Ցույցը ցրվել է օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված կարգով (տե՛ս ստորել՝ 69-րդ պարբերությունը): Ցուցարարները լիովին օգտվել են իրենց պահանջներն արտահայտելու իրավունքից, եւ այդ իրավունքի հետագա իրացումն անհամաչափորեն սահմանափակել է հանրային շահը. առկա էր հասարակական կարգի պահպանման անհրաժեշտություն: Ոստիկանությունը

ցրել է նստացույցը լուսադեմին (մասնավորապես՝ առավոտյան 5:30-ին), երբ պողոտայում ցույցի մասնակիցների թիվը համեմատաբար փոքր էր: Համաձայն Ոստիկանության մասին օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 7-րդ մասերի (տե՛ս ստորեւ՝ 74-րդ պարբերությունը)՝ բողոքի ակցիան ցրելու համար կիրառվել են «հատուկ միջոցներ», այն է՝ ջրցան մեքենա:

Փոխոստիկանապետը հավելել է, որ ցույցը ցրելուց հետո ցուցարարների մի մասը լքել է տարածքը, բայց մյուսները հավաքվել են Ազատության հրապարակի հարակից տարածքում՝ կոչ անելով վերադառնալ Բաղրամյան պողոտա: Համապատասխանաբար Ոստիկանության մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ եւ 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (տե՛ս ստորեւ՝ 70-րդ եւ 71-րդ պարբերությունները), ցուցարարները ոստիկանության կողմից վերցվել են արգելանքի տակ՝ պարզելու համար նրանց ինքնությունը եւ թե արդյոք նրանց գործողությունները կարող են որակվել որպես խուլիգանություն: Այդ ցուցարարները արգելանքի տակ են պահվել ավելի քան երեք ժամ (առավելագույն ժամկետը, որի ընթացքում անձը կարող էր պահվել ոստիկանությունում, այնուհետեւ ազատ արձակվել առանց ձերբակալման արձանագրություն կազմելու), եւ նրանց նկատմամբ որեւէ վարչական տույժ չի կիրառվել:

20. 2015 թվականի հոկտեմբերի 1-ին դիմումատուի փաստաբանը դիմումատուի անունից քրեական գործ հարուցելու վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ՀՔԾ: Նա պնդել է, որ 2015 թվականի հունիսի 23-ին՝ ժամը 5-ից 5:30-ն ընկած ժամանակահատվածում՝ նստացույցը ցրելուց հետո, դիմումատուն ձերբակալվել է նստացույցի անցկացման վայրի մոտակայքում եւ խուլիգանություն կատարելու կասկածանքով տեղափոխվել է Շենգավիթի ոստիկանության բաժին: Ոստիկանության բաժանմունքում նա հարցաքննվել է որպես վկա եւ ակոհողի եւ թմրանյութերի համապատասխանաբար երկու թեստ է անցել: Դիմումատուն պնդում էր, որ իրեն ազատ են արձակել միայն ժամը 13:30-ի սահմաններում, եւ ոստիկանությունում իր արգելանքի տակ գտնվելու ամբողջ ընթացքում նա թաց հագուստով է եղել եւ մնացել է առանց սննդի, եւ նրան հանգստի ժամանակ չի տրամադրվել: Նա ՀՔԾ-ին խնդրել է պատասխանատվության ենթարկել

մեղավորներին եւ քննել ցույցը ցրելիս ոստիկանության գործողությունների օրինականությունն ու համաչափությունը, ներառյալ՝ «հատուկ միջոցների» կիրառման անհրաժեշտությունը:

21. Նույն օրը դիմումատուի փաստաբանը հարցում է կատարել Շենգավիթի ոստիկանության բաժին՝ դիմումատուի ձերբակալման եւ նրան ոստիկանությունում պահելու հանգամանքների վերաբերյալ: Ի պատասխան՝ նրան հայտնել են, որ 2015 թվականի հունիսի 23-ին՝ առավոտյան ժամը 6:10-ին, դիմումատուն խուլիգանություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, եւ որ առավոտյան ժամը 8:50-ին նա տեղափոխվել է քննչական բաժին: Փաստաբանին տեղեկացրել են, որ լրացուցիչ տեղեկություններ ստանալու ցանկության դեպքում նա պետք է դիմում ներկայացնի ՔԿ:

22. 2015 թվականի նոյեմբերի 23-ին նա նմանատիպ հարցումով դիմել է ՔԿ համապատասխան ստորաբաժանում: Նրան տեղեկացրել են, որ դիմումատուի նկատմամբ որեւէ քրեական գործ չի հարուցվել, եւ որ դիմումատուն որեւէ դատավարական կարգավիճակ չի ունեցել ՔԿ-ի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի կողմից քննվող որեւէ քրեական գործի շրջանակներում:

23. 2015 թվականի հունիսի 23-ին կազմված «Անձին ոստիկանություն բերման ենթարկելու մասին արձանագրության» համաձայն՝ նույն օրը՝ ժամը 6-ի սահմաններում, դիմումատուն Ազատության հրապարակի հարակից տարածքից բերման է ենթարկվել Շենգավիթի ոստիկանության բաժին՝ խուլիգանություն կատարելու կասկածանքով: Դիմումատուի իրավունքների գրավոր պարզաբանման համաձայն, որը նրան տրվել է ոստիկանության բաժանմունքում, դիմումատուն ազատազրկվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի հիման վրա (ոստիկանության ծառայողի օրինական հրամանը չկատարելը. տե՛ս ստորել՝ 58-րդ պարբերությունը):

24. Դիմումատուի նկատմամբ ձեռնարկված դատավարական գործողությունների ամփոփագրի համաձայն, ինչպես նշված է 2019 թվականի հունիսի 24-ի որոշման մեջ (տե՛ս ստորել՝ 31-րդ պարբերությունը), դիմումատուն

Շենգավիթի ոստիկանության բաժին է բերվել առավոտյան ժամը 6-ի սահմաններում: Ոստիկանությունում արգելանքի տակ գտնվելու ընթացքում դիմումատուն ենթարկվել է անձնական զննության, այնուհետև վերցրել են նրա մատնահետքերը եւ լուսանկարել նրան: Վերջինս ինչ-որ պահի հրաժարվել է բացատրություն տալ եւ հարցաքննվել է որպես վկա Շենգավիթի ոստիկանության բաժնի քննչական բաժանմունքում՝ առավոտյան ժամը 10:05-ից մինչև 11:45-ն ընկած ժամանակահատվածում: Ոստիկանության ծառայող Վ.Թ.-ն որոշում է կայացրել դիմողից վերցնել մեզի եւ մագերի նմուշներ եւ այդ նմուշները հանձնել թունաբանական փորձաքննության:

25. 2016 թվականի մարտի 16-ին իր փաստաբանի ներկայությամբ դիմումատուն որպես վկա հարցաքննվել է ՀԿԾ-ի քննիչի կողմից՝ թիվ 62217915 քրեական գործի շրջանակներում (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը), եւ նրան համապատասխանաբար տրվել է տուժողի կարգավիճակ:

Նա մասնավորապես պնդել է, որ 2015 թվականի հունիսի 22-ին մյուս ցուցարարների հետ միասին երթով շարժվել է դեպի Բաղրամյան պողոտա, եւ պողոտայում են մնացել ամբողջ գիշեր: Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, ոստիկանությունը ցուցարարներին նախազգուշացրել է, որ իրենց գործողություններն անօրինական են եւ պահանջել է նրանցից ազատել ճանապարհը՝ զգուշացնելով, որ հակառակ դեպքում իրենք (այսինքն՝ ոստիկանությունը) կցրեն նստացույցը: Սակայն ցուցարարները շարունակել են մնալ փողոցում՝ կարծելով, որ բողոքի ակցիան օրինական է: Առավոտյան ժամը 5-ի սահմաններում ոստիկանությունը ջրցան մեքենայի խողովակով ջրել է ցուցարարներին, ապա սկսել է ձերբակալել պողոտայում նստածներին: Այնուհետև բազմաթիվ այլ ցուցարարների ընկերակցությամբ դիմումատուն շարժվել է դեպի Ազատության հրապարակ, իսկ ոստիկանությունը հետապնդել է նրանց: Կարճ ժամանակ անց նա ձերբակալվել է եւ առավոտյան ժամը 6-ի սահմաններում բերման է ենթարկվել Շենգավիթի ոստիկանության բաժին: Ոստիկանական բաժանմունք բերման ենթարկվելուց հետո ոստիկանության ծառայողը կազմել է ստանդարտ դատավարական փաստաթղթերը: Դիմումատուն

զանգահարել է եղբորը, որը հայտնել է վերջինիս, որ իր մոտ է գալու փաստաբան՝ իրեն աջակցելու համար: Դիմումատուին խուզարկել եւ լուսանկարել են: Մոտ երկու ժամ անց, նրան տեղափոխել են ոստիկանության բաժանմունքի քննչական բաժին՝ հարցաքննության համար: Առավոտյան ժամը 9-ի սահմաններում նա հրաժարվել է գրավոր վկայություն տալ. այնուհետեւ ոստիկանության ծառայողը նրան տարել է առաջին հարկ, սակայն չի բացատրել, թե ինչու պետք է այնտեղ սպասի: Դիմումատուն նշել է, որ թեեւ ոստիկանության ծառայողները չեն արգելել նրան հեռանալ, նրանք չեն ասել նաեւ, որ նա ազատ է եւ կարող է տուն վերադառնալ. հետեւաբար, որպես օրինապահ քաղաքացի, նա որոշել է սպասել: Առավոտյան ժամը 10-ի սահմաններում երկու ոստիկանության ծառայողներ (նրա թեւերից բռնած) դուրս են բերել նրան ոստիկանության բաժանմունքից, որտեղ նա հանդիպել է իր փաստաբանին: Վերջինս ոստիկանության ծառայողներին հարցրել է, թե ուր են տանում դիմումատուին եւ ի պատասխան՝ տեղեկություն է ստացել, որ դիմումատուն պետք է թմրանյութերի թեստ անցնի: Փաստաբանը ոստիկաններին ասել է, որ դիմումատուն առանց նրա ոչ մի տեղ չի գնա, այնուհետեւ դիմումատուին հետ են վերադարձրել մեկ այլ քննիչի աշխատասենյակ, որը հայտարարել է, որ դիմումատուն ունի վկայի կարգավիճակ: Հետեւաբար դիմումատուն հարցաքննվել է որպես վկա իր փաստաբանի ներկայությամբ, որից հետո նրան խնդրել են սպասել աշխատասենյակներից մեկում: Այնտեղ ոստիկանության ծառայող Վ. Թ.-ն նրան ասել է, որ դիմումատուին պետք է տանեն թմրանյութերի թեստ անցնելու: Շուտով աշխատասենյակ է մտել ոստիկանության բաժնի այն ժամանակվա պետի տեղակալը եւ իմանալով, որ դիմումատուն արդեն հարցաքննվել է որպես վկա, ասել է, որ նա ազատ է եւ կարող է գնալ: Երբ նրանք պատրաստվել են հեռանալ, դիմումատուին եւ նրա փաստաբանին կրկին խնդրել են սպասել աշխատասենյակներից մեկում, ենթադրաբար ոստիկանության բաժնի պետի հրահանգով (որը ենթադրաբար ցանկանում էր խոսել նրանց հետ): Դիմումատուի փաստաբանը դուրս է եկել աշխատասենյակից, որպեսզի պարզի իրենց՝ ոստիկանության բաժնում մնալու պատճառները: Երբ դիմումատուն փորձել է դուրս գալ աշխատասենյակից, ոստիկանության ծառայողն ասել է նրան

սպասել ներսում: Կարճ ժամանակ անց երկու այլ ձերբակալված ցուցարարների հետ միասին (եւ իր փաստաբանի բացակայությամբ) դիմումատուին նստեցրել են ոստիկանության մեքենա եւ տեղափոխել են կախվածությունների բուժման ազգային կենտրոն (ԿԲԱԿ)՝ թմրանյութերի թեստ անցնելու համար. նրանք ժամանել են ժամը 13:00-ի սահմաններում: Երբ դիմումատուն հրաժարվել է թմրանյութերի թեստավորում անցնել, Վ. Թ.-ն նրան սպառնացել է ձերբակալել նրան: Այնուհետեւ դիմումատուն հանձնվել է եւ ազատ է արձակվել թեստը հանձնելուց հետո միայն:

Ի պատասխան քննիչի այն հարցին, թե արդյոք ոստիկանության ծառայողները հրաժարվել են իրեն բաց թողնել «երեքժամյա ժամկետ»-ը լրանալուց հետո, դիմումատուն պատասխանել է, որ այնպիսի տպավորություն է, որ նա հեռանալու հնարավորություն չի ունեցել, այդ իսկ պատճառով չի պահանջել, որ իրեն բաց թողնեն. չնայած նրանք իրականում իրեն փակի տակ չեն պահել: Դիմումատուն հավելել է, որ ոստիկանության բաժնում իրեն լավ են վերաբերվել. թույլ են տվել օգտվել պետքարանից, ինչպես նաեւ տվել են նրան ջուր եւ թույլ տվել հեռախոսազանգ կատարել: Չնայած թաց հագուստին՝ նա չէր մրսել:

26. Ոստիկանության ծառայողները վկայություն են տվել վերոնշյալ թիվ 62217915 քրեական գործի շրջանակներում (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը): Նրանք ներկայացրել են նմանատիպ հայտարարություններ՝ պնդելով, որ ցույցը ցրելուց հետո մի քանի ցուցարարներ «բերման են ենթարկվել» ոստիկանության բաժին՝ խուլիգանական գործողություններում ներգրավված լինելու կասկածանքով: Մասնավորապես հարուցվել է քրեական գործ ՔԿ-ի շենքի մոտ տեղի ունեցած նստացույցի մասնակիցների նկատմամբ (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Ոստիկանության պատասխանատու ծառայողները կազմել են ստանդարտ դատավարական փաստաթղթեր այն ցուցարարների համար, որոնք բերման են ենթարկվել ոստիկանության բաժին, այնուհետեւ նրանք տեղափոխվել են ՔԿ՝ խուլիգանության գործի շրջանակներում հարցաքննվելու նպատակով: Երեքժամյա ժամկետը լրանալուց հետո ոչ ոք իր կամքին հակառակ չի պահվել ոստիկանական բաժանմունքում, եւ փաստորեն, Ա. Հ.-ի հրահանգմամբ՝

նստիկանության ծառայողները ցուցարարներին հայտնել են, որ նրանք ազատ են եւ կարող են գնալ, սակայն քննիչները, այնուամենայնիվ, պետք է հարցաքննեն նրանց: Ցուցարարների մեծ մասը որոշել է մնալ մինչ իրենց հարցաքննության հերթը հասնելը: Ոստիկանության ծառայողները հարգանքով են վերաբերվել ձերբակալվածներին, տեղեկացրել նրանց իրավունքների մասին եւ թույլ տվել ջուր խմել, զանգահարել եւ օգտվել պետքարանից: Ցուցարարներին տեղավորել են ոստիկանական բաժնի տարբեր աշխատասենյակներում: Ինչ վերաբերում է դիմումատուի՝ վերը նշված ԿԲԱԿ տեղափոխմանը, ոստիկանության բաժին բերման ենթարկված անձինք պարտավոր են նմուշներ տրամադրել դատաբժշկական փորձաքննության համար:

27. Ոստիկանության աշխատակից Լ.Ա.-ն, որը կազմել էր ստանդարտ դատավարական փաստաթղթերը, դիմումատուին ոստիկանության բաժանմունք բերման ենթարկելուց հետո նաեւ պնդել է, որ դիմումատուին բերման ենթարկելու վերաբերյալ տարբեր փաստաթղթերում տարբեր իրավական հիմքեր նշելը պայմանավորված է եղել նրա կողմից անփութությամբ եւ շտապողականությամբ, սակայն դիմումատուն բերման է ենթարկվել ոստիկանության բաժին խուլիգանական գործողություններում ներգրավված լինելու կասկածանքով:

### III. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔՆԵՐԸ

28. Քննության ընթացքում հարցաքննվել է ավելի քան երկու հարյուր ոստիկան: Նրանք տվել են նույնանման ցուցմունքներ՝ պնդելով, որ իրենք ցուցարարներին ոստիկանության բաժանմունքում երեք ժամից ավելի պահելու մտադրություն չեն ունեցել: Ամենայն հավանականությամբ, քանի որ նրանք ծանրաբեռնված են եղել փաստաթղթերի ձեւակերպմամբ, որոշ դեպքերում յուրաքանչյուր ցուցարարի մասին համապատասխան փաստաթղթերը ձեւակերպելու համար պահանջվել է երկար ժամանակ: Բացի այդ, ցուցարարներին տեղեկացվել է, որ նրանց պետք է հարցաքննեն, եւ նրանք նախընտրել են սպասել



հարցաքննության իրենց հերթին: Երեսուներեք ցուցարարներ ստացել են տուժողի կարգավիճակ. նրանցից 15-ը վերոնշյալ ջրցան մեքենաների կիրառման արդյունքում ստացել են կապտուկներ եւ սալջարդներ, սակայն նրանց առողջությանը լուրջ վնաս չի հասցվել: Թեեւ որոշ տուժողներ բողոքել են ոստիկանության ծառայողների կողմից ցուցաբերված վատ վերաբերմունքից, մյուսները պնդել են, որ ոստիկանության բաժանմունքում գտնվելու ընթացքում իրենց լավ են վերաբերվել, եւ իրենց նկատմամբ չի կիրառվել հատուկ վերահսկողություն: Ընդհակառակը, ոստիկանության ծառայողները նրանց թույլ են տվել կատարել զանգեր եւ ազատ տեղաշարժվել:

29. 2019 թվականի մարտի 4-ին թիվ 62217915 քրեական գործով (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը) զբաղվող ՀՔԾ քննիչը (ՀՔԾ քննիչ) որոշել է դադարեցնել քննությունը, քանի որ այն անձանց ինքնությունը, որոնց նկատմամբ կարող էր մեղադրանք առաջադրվել, շարունակել է մնալ անհայտ: Որոշման մեջ վկայակոչվել են նստացույցը ցրելու հանգամանքները, որոնք շարադրված են եղել ոստիկանության տրամադրած պարզաբանման մեջ (տե՛ս վերելում՝ 19-րդ պարբերությունը): Վկայակոչվել են նաեւ տուժողների եւ ոստիկանության ծառայողների ցուցմունքները (տե՛ս վերելում՝ 28-րդ պարբերությունը): Ոստիկանության ենթադրյալ բռնությունից տուժողների մեծ մասը տեղեկություն չի տրամադրել ոստիկանության այն ծառայողների վերաբերյալ, որոնք ներգրավված են եղել բռնության այդ գործողություններում կամ կատարել են այլ ապօրինի գործողություններ: Բացի այդ, ձեռք չեն բերվել ապացույցներ, որոնցով կմատնանշվեր, որ ոստիկանության մյուս ծառայողները (ինչպես պնդել են որոշ տուժողներ) կատարել են քրեական հանցագործություն, ինչն էլ անհնարին է դարձրել այդ ծառայողների ենթադրյալ գործողությունների իրավական որակումը: Ինչ վերաբերում է ջրցան մեքենաների կիրառմամբ նստացույցը ցրելուն, ապա «հատուկ միջոցների» գործադրումը կարգավորող կանոնների խախտումը, Քրեական Օրենսգրքի 373-րդ հոդվածի համաձայն, դրանք խախտող անձանց համար առաջացնում է քրեական պատասխանատվություն (տե՛ս ստորել՝ 47-րդ պարբերությունը) միայն այն դեպքում, երբ այդ խախտման արդյունքում մարդու

առողջությանն անգգուշությամբ պատճառվել է թեթև կամ միջին ծանրության վնաս. այդուհանդերձ, առկա չի եղել որևէ հիմք՝ հաստատելու, որ որևէ մեկը կրել է այդպիսի վնաս:

30. 2019 թվականի ապրիլի 15-ին թիվ 62217915 քրեական գործով վարույթը վերահսկող դատախազը (տես վերելում՝ 17-րդ պարբերությունը), ի թիվս այլ վերաքննիչ բողոքների, դիմումատուի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո որոշել է բեկանել վերոնշյալ որոշումը եւ գործն ուղարկել լրացուցիչ քննության: Դատախազը նշել է, որ փաստեր հավաքելու գործառույթը ոստիկանությանը վստահելը չի կարող ապահովել քննության անկախությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոստիկանության ծառայողները ստիպված են լինելու հավաքել իրենց գործընկերներին վերաբերող տեղեկություններ: Ավելին, նա հանձնարարել է ՀՔԾ-ին ավելի մանրամասն քննություն իրականացնել ցուցարարների՝ ոստիկանությունում արգելանքի տակ պահվելու ժամանակահատվածի մասով, որը գերազանցել է օրենքով սահմանված երեք ժամը: Մասնավորապես անհրաժեշտ է եղել պարզել ցուցարարներին ոստիկանության բաժանմունք տեղափոխելու կարգադրություն տվող եւ կարգադրությունը կատարող անձանց ինքնությունը, պարզել ցուցարարներին ոստիկանության բաժանմունք տեղափոխելու հիմքերի արձանագրման օրինականությունը, ոստիկանության յուրաքանչյուր այն ծառայողի ինքնությունը, որը պատասխանատու էր ոստիկանության կողմից այդ ցուցարարներին երեք ժամից ավելի ոստիկանությունում արգելանքի տակ պահելու համար, եւ որոշել, թե արդյոք դա արվել է այդ անձանց իրավունքները խախտելու մտադրությամբ, եւ որոշել, թե արդյոք նրանց վարքագիծը կարող է որակվել որպես քրեական իրավազանցություն:

31. Վարույթը վերսկսելուց հետո որոշումներ են կայացվել պատասխանատվության չենթարկելու ոստիկանության ծառայողներին՝ ցուցարարներին ոստիկանությունում երեք ժամից ավելի արգելանքի տակ պահելու համար: 2019 թվականի հուլիսի 24-ին նման որոշում է կայացվել մասնավորապես դիմումատուի վերաբերյալ: ՀՔԾ քննիչը, ի թիվս այլնի, հիմնվելով

դիմումատուի եւ ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, եկել է այն եզրակացության, որ միայն դիմումատուի՝ երեք ժամից ավելի ոստիկանության բաժանմունքում գտնվելու փաստն ինքնին բավարար չէ եզրակացնելու համար, որ ոստիկանության համապատասխան ծառայողների գործողությունները ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնական լիազորությունների չարաշահում են (տե՛ս ստորել՝ 45-րդ պարբերությունը): Դա այդպես է, նույնիսկ եթե դիմումատուի՝ ոստիկանությունում արգելանքի տակ ավելի երկար գտնվելու հիմքը եղել է ոստիկանության այդ ծառայողների կողմից տրված բանավոր հրահանգը (այլ ոչ թե դիմումատուին փակի տակ պահելը)՝ ընթացակարգային որոշ գործողություններ ավարտին հասցնելու նպատակով ժամանակ շահելու համար: Այսպիսով, ոստիկանության ծառայողների գործողություններում բացակայել է պաշտոնական լիազորությունների չարաշահման հետ կապված հանցագործության սուբյեկտիվ կողմի հատկանիշը (*mens rea*), որով պահանջվում էր ուղղակի դիտավորություն: Հետեւաբար, հաշվի առնելով, որ i) չի հաստատվել, որ ոստիկանության ծառայողները դիմումատուին դիտավորությամբ ոստիկանության բաժնում պահել են երեք ժամից ավելի, եւ ii) սպառվել է նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունը, ոստիկանության ծառայողների գործողություններում բացակայել է պաշտոնական լիազորությունների չարաշահման հանցակազմը: Միեւնույն ժամանակ, այն փաստը, որ պետական պաշտոնյաների գործողությունները չեն կրել քրեական բնույթ, չի բացառել նրանց՝ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու կամ դիմումատուի՝ քաղաքացիական վարույթի շրջանակներում պետությունից ոչ նյութական վնասի հատուցում ստանալու հնարավորությունը:

32. 2019 թվականի հուլիսի 26-ի մեկ այլ որոշմամբ ՀՔԾ քննիչը որոշել է կասեցնել թիվ 62217915 քրեական գործով վարույթը՝ 2019 թվականի մարտի 4-ի որոշման մեջ նշված նույն հիմքերով (տե՛ս վերելում՝ 29-րդ պարբերությունը):

33. 2019 թվականի հուլիսի 24-ի եւ 26-ի որոշումները դատախազի կողմից թողնվել են անփոփոխ՝ համապատասխանաբար 2019 թվականի դեկտեմբերի 4-ին եւ օգոստոսի 12-ին դիմումատուի կողմից դատախազին ներկայացված վերաքննիչ

բողոքներից հետո:

34. 2019 թվականի դեկտեմբերի 26-ին դիմումատուն բողոք է ներկայացրել Երեւանի ընդհանուր իրավասության դատարան՝ i) ՀՔԾ քննիչի 2019 թվականի հուլիսի 24-ի՝ ոստիկանության ծառայողների նկատմամբ դատական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշման դեմ եւ ii) դատախազի՝ 2019 թվականի դեկտեմբերի 4-ի՝ այդ որոշումն ուժի մեջ թողնելու մասին հետագա որոշման դեմ (տես վերելում՝ 31-րդ եւ 33-րդ պարբերությունները): Նա նշել է, որ ոստիկանության բաժանմունքում իր մնալը կամավոր չի եղել (ինչպես պնդել է ոստիկանությունը): Եթե նա իսկապես ունենար ոստիկանության բաժանմունքից ազատ հեռանալու հնարավորություն, ինչու՞ պետք է նա ստիպված լիներ հանձնել թմրանյութերի ախտորոշման թեստ: Դիմումատուն նաեւ պնդել է, որ իր մի քանի ժամով ազատագրվումը կարող էր նպատակ ունենալ պատժելու իրեն՝ նստացույցին մասնակցելու համար: Նա հաստատել է, որ հարյուրավոր ցուցարարներ եղել են ոստիկանության ծառայողների ենթադրյալ հանցավոր վարքագծի գոհ:

35. 2020 թվականի հուլիսի 30-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է դիմումատուի բողոքը՝ հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ: Դատարանը մասնավորապես գտել է, որ դիմումատուի իրավունքները չեն խախտվել. ոստիկանության ծառայողների ենթադրյալ հանցավոր վարքագծի քննությունը կատարվել է մանրակրկիտ եւ բարեխիղճ կերպով:

36. 2020 թվականի հոկտեմբերի 29-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է վերը նշված որոշման դեմ դիմումատուի ներկայացրած վերաքննիչ բողոքը: Դիմումատուն չի ներկայացրել վճռաբեկ բողոք:

37. 2019 թվականի հոկտեմբերի 1-ին դիմումատուն Երեւանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոք 2019 թվականի հուլիսի 26-ի որոշման եւ դատախազի՝ 2019 թվականի օգոստոսի 12-ի՝ այն անփոփոխ թողնելու որոշման դեմ (տե՛ս վերելում՝ 32-րդ եւ 33-րդ

պարբերությունները): Այդուհանդերձ, թիվ 62217915 քրեական գործով վարույթը վերսկսելուց հետո (տե՛ս ստորև՝ 38-րդ պարբերությունը) նա հետ է վերցրել իր բողոքը:

38. 2020 թվականի հունվարի 10-ին, որոշակի դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ՀՔԾ քննիչը որոշել է վերսկսել թիվ 62217915 քրեական գործով վարույթը:

39. 2020 թվականի հունվարի 22-ին նա երրորդ անգամ որոշել է կասեցնել քրեական գործով վարույթը՝ վերոնշյալ նույն հիմքերով (տե՛ս վերևում՝ 29-րդ եւ 32-րդ պարբերությունները): Որոշման մեջ նշվել է, որ չնայած (վարույթը վերսկսելուց հետո) ոստիկանության ավագ սպային մեղադրանք է առաջադրվել ցուցարարներից մեկի վրա ֆիզիկական հարձակում գործելու համար, ոստիկանության մյուս ծառայողների վերաբերյալ ձեռք չեն բերվել լրացուցիչ ապացույցներ:

40. 2020 թվականի փետրվարի 12-ին՝ դիմումատուի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելուց հետո, այս որոշումը դատախազի կողմից թողնվել է անփոփոխ:

41. 2020 թվականի մարտի 11-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել Երեւանի ընդհանուր իրավասության դատարան՝ i) քրեական գործով վարույթի երրորդ կասեցման դեմ (տե՛ս վերևում՝ 39-րդ պարբերությունը), եւ ii) այն անփոփոխ թողնելու մասին դատախազի վերոնշյալ որոշման դեմ:

42. 2021 թվականի հունիսի 30-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը: Այն գտել է, ի թիվս այլնի, որ ինչ վերաբերում է դիմումատուի իրավունքներին, 2019 թվականի հուլիսի 24-ին ՀՔԾ քննիչն արդեն որոշում է կայացրել հրաժարվել իրեն ազատությունից զրկելու գործողություններում ներգրավված ոստիկանության ծառայողների նկատմամբ դատական հետապնդում իրականացնելուց (տե՛ս վերևում՝ 31-րդ պարբերությունը), եւ իսկապես, գործը վերսկսելուց հետո դիմումատուին վերաբերող դրվագը չի վերաքննվել: Միեւնույն ժամանակ դիմումատուն

կարողացել է բողոքներ ներկայացնել 2019 թվականի հուլիսի 24-ի որոշման դեմ.  
այդ բողոքները քննվել են մերժվել են երկու ատյանների դատարանների կողմից:

Դիմումատուն չի բողոքարկել վերոնշյալ որոշումը:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

I. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

**Ա. 2003 թվականի Քրեական օրենսգիրք, տվյալ ժամանակահատվածում գործող (ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին)**

43. 225-րդ հոդվածի 5-րդ մասում զանգվածային անկարգությունները սահմանվում են որպես «բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույքի ոչնչացմամբ կամ գույքը վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված մեկից ավելի անձանց գործողությունները, որոնց հետեւանքով վտանգվում է հասարակական անվտանգությունը»:

44. Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «խուլիգանությունը դասակարգվում է որպես դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև մեկ ամիս ժամկետով»:

45. 308-րդ հոդվածի համաձայն (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը)՝ «Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով (որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին), պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ

տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

46. 309-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն (Պաշտոնեական լիազորություններն անցնելը)՝ «Պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից եւ էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

47. Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասը, որը ներառված է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գլխում, նախատեսում է. «Զենքի, ռազմամթերքի, ինչպես նաեւ ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է թեթեւ կամ միջին ծանրության վնաս՝ պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:



**Բ. 1999 թվականի Քրեական դատավարության օրենսգիրք. տվյալ ժամանակահատվածում գործող (ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 30-ին)**

48. Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) համապատասխան դրույթները համառոտ շարադրված են *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի [Mushegh Saghatelyan v. Armenia]* գործում, թիվ 23086/08, §§ 100-05 եւ 109-11, 2018 թվականի սեպտեմբերի 20:

49. 62-րդ հոդվածի (Կասկածյալը) 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալ է այն անձը՝ ա) որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով. բ) որի նկատմամբ մինչեւ մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված»:

50. 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով կասկածյալը պարտավոր է ենթարկվել բժշկական ստուգման, մատնադրոշմման, լուսանկարվել եւ հնարավորություն ընձեռել վերցնելու արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ»:

51. 128-րդ հոդվածի (Ձերբակալման հասկացությունը) 1-ին մաս-ի համաձայն՝ ձերբակալումը սահմանվում է, որպես «անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով, նրան արգելանքի վերցնելը, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը եւ այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»: 128-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձերբակալումը կատարվում է 1) հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա. 2) քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա:

52. 131<sup>1</sup> հոդվածի (Կասկածյալի ձերբակալման կարգը) 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում,

կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենն այն կազմելուց հետո անհապաղ ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին (հաստատելով որ այն ճշգրիտ է)»:

53. 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է անհապաղ ազատման, եթե՝ 1) չի հաստատվել անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու մասին կասկածը. 2) բացակայում է անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը. 3) լրացել է ձերբակալման՝ ՔԴ օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, եւ դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել»:

54. 2018 թվականի հունվարի 16-ին ՔԴՕ-ի 129-րդ հոդվածը լրացվել է 3-8 մասերով, որոնք սահմանում են մինչև ձերբակալվածի կարգավիճակ ստանալը ազատությունից զրկված անձանց իրավունքներն ու պարտականությունները: Մասնավորապես 129-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «անկախ ձերբակալման արձանագրությունն անձին հայտարարելու հանգամանքից՝ փաստացի արգելանքի վերցվելուց չորս ժամ հետո անձը ձեռք է բերում կասկածյալի վերաբերելի իրավունքները եւ պարտականությունները»:

#### **Գ. Տվյալ ժամանակահատվածում գործող՝ 1999 թվականի Քաղաքացիական օրենսգիրքը.**

55. 162.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը (կամ նրա օրինական ներկայացուցիչը) իրավունք ունի պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշման, գործողության կամ անգործության հետեւանքով խախտվել են այդ անձի՝ Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով երաշխավորված հիմնարար իրավունքները:

56. 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Քաղաքացիական օրենսգրքի

վերոհիշյալ հոդվածում կատարվել են փոփոխություններ, որոնք ընդլայնում են ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավունքի շրջանակը: Հատկանշական է, որ 162.1 հոդվածի 2-րդ մասի փոփոխված խմբագրությամբ հնարավորություն է ստեղծվել պահանջել ոչ նյութական վնասի հատուցում՝ կապված արտահայտվելու եւ հավաքների ազատության իրավունքի ենթադրյալ խախտման հետ: 162.1 հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 1-ին: 162.1 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետեւանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

## **Դ. 1986 թվականի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը**

57. 180<sup>1</sup> հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առանց համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով իրազեկելու կամ իրազեկման պայմանների խախտմամբ հավաք անցկացնելն առաջացնում է տուգանքի նշանակում հավաքի կազմակերպչի կամ ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով»: 180<sup>1</sup> հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ «Հավաքի խաղաղ եւ բնականոն ընթացքի ապահովման վերաբերյալ ոստիկանության՝ օրենքով սահմանված պահանջները չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

58. 182-րդ հոդվածի համաձայն՝ «Հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման պարտականությունները կատարելու ընթացքում զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով»:

59. 258-րդ հոդվածը սահմանում է, ի թիվս այլնի, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, խախտողի անձը

պարզելու եւ իրավախախտումները կանխելու եւ այլ նպատակով անձին մինչեւ մեկ ժամ ժամկետով ազատությունից զրկելու ընթացակարգը:

60. 259-րդ հոդվածի 1-ի մասը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթն ապահովելու միջոցները) սահմանում է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ, եւ եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, գործերի ժամանակին ու ճիշտ քննումը եւ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումը ապահովելու նպատակով, թույլատրվում են անձի վարչական ձերբակալում, անձնական զննում, իրերի զննում եւ իրերի ու փաստաթղթերի վերցնում»:

## **Ե. 2014 թվականի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը**

61. 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների

իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեն Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որեւէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության»:

62. 69-րդ հոդվածի (Ճանաչման հայցը) 3-րդ մասի համաձայն՝ «Ճանաչման հայցի շրջանակներում հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլեւս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որեւէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ եթե 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ. 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ 3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

63. 72-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ «Ճանաչման հայցը Վարչական դատարան կարող է ներկայացվել 5 տարվա ընթացքում՝ վարչական ակտն ուժը կորցնելու, գործողությունը կամ անգործությունը սպառվելու պահից՝ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործերով»:

## **Զ. «Հավաքների ազատության մասին» 2011 թվականի օրենքը**

64. 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հավաքի սկզբում հավաքի ղեկավարը հայտարարում է իր անունը եւ ազգանունը, իսկ եթե հավաքը

կազմակերպել է իրավաբանական անձը, ապա նաև իրավաբանական անձի լրիվ անվանումը, հավաքի նպատակը, ինչպես նաև հավաքի ավարտի մոտավոր ժամկետը: Եթե հավաքի ընթացքում իրականացվելու է երթ, ապա պետք է հրապարակվեն երթի ուղին եւ ժամանակացույցը»:

65. 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օրվա որոշակի ժամերին (ժամը 22:00-ից մինչև 8:00-ն) բնակելի շինություններին, հիվանդանոցներին, գիշերօթիկ դպրոցներին եւ գիշերելու համար նախատեսված այլ շենքերի հարող տարածքներում անցկացվող հավաքները չեն կարող զուգորդվել անձանց հանգիստը խանգարող աղմուկով կամ լուսային ազդանշաններով»:

66. 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե հավաքն անցկացվում է սույն օրենքի 2-րդ գլխով նախատեսված իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ, ապա ոստիկանությունը պարտավոր է բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է, եւ որ մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության: Եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասությունների սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին»:

67. 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, երբ այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը»:

68. 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հավաքի ղեկավարի բացակայության կամ հավաքի ղեկավարի կողմից ոստիկանության պահանջը չկատարելու դեպքերում ոստիկանության ներկայացուցիչը ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով մասնակիցներից պահանջում է դադարեցնել հավաքը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ: Միաժամանակ ոստիկանության ներկայացուցիչը հավաքի մասնակիցներին նախազգուշացնում է սահմանված ժամկետում հավաքը կամովին չդադարեցնելու դեպքում հավաքը ցրելու, ներառյալ՝ Ոստիկանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կիրառելու իր լիազորության մասին»:

69. 43-րդ հոդվածի համաձայն՝ «33-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետում հավաքը կամովին չդադարեցվելու դեպքում ուստիկանությունը ցրում է հավաքը»:

**Է. Ուստիկանության մասին 2001 թվականի օրենք՝ տվյալ ժամանակահատվածում գործող**

70. 2-րդ հոդվածի (Ուստիկանության խնդիրները) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ի թիվս այլնի, «Ուստիկանության խնդիրներն են օրենքին համապատասխան ապահովել հանցագործությունների ու վարչական իրավախախտումների կանխումը եւ խափանումը»:

71. 11-րդ հոդվածի (Ուստիկանության պարտականությունները հանցագործությունների եւ այլ իրավախախտումների դեմ պայքարելիս) 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ի թիվս այլնի, «Ուստիկանությունը օրենքով սահմանված կարգով եւ դեպքերում պարտավոր է կանխել եւ խափանել հանցագործություններն ու այլ իրավախախտումներ, բերման ենթարկել հանցանք կամ վարույթ պահանջող այլ իրավախախտում կատարած անձանց, պարզել հանցագործություններ եւ այլ իրավախախտումներ ծնող պատճառներն ու դրանց նպաստող պայմանները, ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք վերացնելու ուղղությամբ»:

72. 20-րդ հոդվածի (Ուստիկանության իրավունքները հանցագործություններ հայտնաբերելիս եւ բացահայտելիս) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ի թիվս այլնի, «Ուստիկանությունը հանցագործություններ հայտնաբերելիս եւ բացահայտելիս իրավունք ունի հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց ուղարկելու կամ հասցնելու բժշկական հաստատություն՝ նրանց օրգանիզմում ալկոհոլի կամ թմրամիջոցների առկայությունը պարզելու նպատակով, եթե ստուգման արդյունքն անհրաժեշտ է հանցագործության փաստը հաստատելու կամ հերքելու կամ գործն օբյեկտիվորեն քննելու համար»:

73. 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հատուկ միջոցները

նստիկանության սպառազինության մեջ ընդգրկված եւ սույն օրենքով նախատեսված տեխնիկական միջոցները (սարքերը, սարքավորումները, առարկաները, նյութերը) կամ ծառայողական շներն են, որոնց հիմնական նշանակությունը մարդկանց նկատմամբ անմիջական ֆիզիկական կամ հոգեբանական կամ նյութական օբյեկտների նկատմամբ անմիջական ֆիզիկական ներգործությունն է»:

74. 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Ոստիկանության ծառայողները անձամբ կամ ոստիկանության ստորաբաժանման կազմում իրավունք ունեն օգտագործելու ոստիկանության տրամադրության տակ գտնվող «հատուկ միջոցներ»՝ ի թիվս այլնի, դիմադրելու ոստիկանության ծառայողին կամ այն անձանց նկատմամբ ցուցաբերվող դիմադրությանը, որոնք i) ներգրավված են հասարակական կարգի պահպանմանը եւ հանցավորության դեմ պայքարի միջոցառումներում, ii) նրանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում»:

31-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Ոստիկանության ծառայողները իրավունք ունեն հատուկ միջոցներ գործադրելու տրանսպորտի, կապի եւ այլ կազմակերպությունների աշխատանքը կազմալուծող զանգվածային անկարգությունները եւ խմբակային գործողությունները խափանելիս»:

75. 31-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Ոստիկանության ծառայողները որպես հատուկ միջոցներ կարող են գործադրել, ի թիվս այլնի, ջրանետեր եւ զրահամեքենաներ՝ 31-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված դեպքերում»:

**Ը. Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 96-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանի որոշումը**

76. Իր վերոհիշյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանը Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը



(տե՛ս վերելում՝ 62-րդ պարբերությունը) ճանաչել է Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասին եւ 75-րդ հոդվածին հակասող եւ անվավեր այնքանով, որքանով այն հնարավորություն չի տալիս անձին օրենքով սահմանված ոչ գույքային վնասի հատուցում պահանջելու մտադրության հիմքով ճանաչման հայց ներկայացնել:

**Թ. Վճռաբեկ Ղատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշում (ԵԱԴԴ/0085/06/09)**

77. Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումը (սույն գործի հետ առնչություն չունեցող) համառոտ շարադրված է *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի [Mushegh Saghatelyan v. Armenia]* գործում, թիվ 23086/08, § 123, 2018 թվականի սեպտեմբերի 20:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ անձի ձերբակալման գործընթացն ավարտված է համարվում անձին ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո կազմված արձանագրության մասին ազատությունից զրկված անձին հայտարարելու պարագայում (այդ անձին արգելանքի տակ վերցնելուց հետո): Այսինքն՝ անձն օրենքով սահմանված կարգով ձերբակալված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ նրան ազատությունից զրկելը պատշաճ կերպով արձանագրվել է, եւ ինքը ծանոթացել է կազմված արձանագրությանը: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի համաձայն՝ թեեւ ՔԴՕ-ի 131<sup>1</sup> հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձերբակալության մասին արձանագրությունը կազմելու համար սահմանվում է ժամկետ, այդ դրույթով չի սահմանվում որեւէ ժամկետ այդ արձանագրությունը ազատությունից զրկված անձին ներկայացնելու համար: Սա կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը չի կարող կալանավորի կարգավիճակ ստանալ նույնիսկ քրեական վարույթն իրականացնող մարմին բերելուց երեք ժամ հետո, եթե վերջինս նրան չի ներկայացնում ձերբակալման մասին արձանագրություն: Ելնելով վերոգրյալից՝

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածը պետք է մեկնաբանել 131<sup>1</sup> հոդվածի լույսի ներքո եւ ամրագրել, որ այն բանից հետո, երբ անձին քրեական հետապնդման մարմին բերելու պահից երեք ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, այդ մարմինը պարտավոր է անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում դրա մասին հայտարարել ազատությունից զրկված անձին: Նման ժամկետային սահմանափակումը ողջամիտ է եւ բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմին բերելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չի հայտարարվում, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված եւ իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից:

**Ժ. Վարչական դատարանի 2019 թվականի հունիսի 17-ի վճիռը  
(ՎԴ//1299/05/16)**

78. Սույն գործով, ինչպես ներկայացրել է կառավարությունը, նստացույցի մասնակիցներից մեկը 2015 թվականի հունիսի 22-ին Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ վարչական դատարան է ներկայացրել ճանաչման հայց (տե՛ս վերելում՝ 62-րդ պարբերությունը)՝ պնդելով, որ, ի թիվս այլնի, խախտվել է ազատության եւ հավաքների ազատության իր իրավունքը: Մասնավորապես նստացույցը ցրելուց հետո նշված ցուցարարը խուլիգանություն կատարելու կասկածանքով զրկվել է ազատությունից, մի քանի ժամ պահվել ոստիկանությունում, այնուհետեւ ազատ է արձակվել առանց մեղադրանքի: Վարչական դատարանը, ի թիվս այլնի, գտել է, որ նրան ազատությունից զրկելու հետ կապված ոստիկանության բաժանմունքում կազմված ստանդարտ ընթացակարգային փաստաթղթերը չեն պարունակում կոնկրետ փաստեր կամ մանրամասներ՝ նրա եւ մյուս ցուցարարների կատարած

գործողությունների մասին (որոնք հիմք էին ջրցան մեքենաների կիրառմամբ նստացույցը ցրելու համար): Վարչական դատարանի կարծիքով՝ նման գործողությունները կարող էին խոչընդոտ հանդիսանալ ճանապարհային երթևեկությանը, աղմուկին, անպարկեշտ բառապաշարի օգտագործմանը կամ ցուցարարների կողմից բռնի վարք դրսևորելուն: Վարչական դատարանն այնուհետև եզրակացրել է, որ նստացույցի ցրումը (որը միջամտություն էր ցուցարարի խոսքի ազատության եւ հավաքների ազատության իրավունքին) օրենքով նախատեսված չի եղել եւ չի հետապնդել օրինական նպատակ, քանի որ չի եղել որեւէ ապացույց, որը ցույց կտար, որ իրենց գործողություններով ցուցարարները (այդ թվում՝ նշված ցուցարարը) առաջացրել են պետական անվտանգության եւ հասարակական կարգի պահպանման սպառնալիքներ կամ կատարել են ոստիկանություն հանրային շահերի եւ այլ անձանց սահմանադրական իրավունքների իրացման նկատմամբ: Ինչ վերաբերում է ցուցարարի՝ իրեն ազատությունից զրկելու վերաբերյալ բողոքին, Վարչական դատարանը նշել է, որ նրան ոստիկանության բաժին տեղափոխելու մասին արձանագրության մեջ նշված չեն եղել նրան վերագրվող փաստացի արարքները: Հետեւաբար դատարանը եզրակացրել է, որ քանի որ գործում առկա ապացույցները չեն հաստատում, որ ցուցարարի գործողությունները խախտել են այլ անձանց իրավունքները, կամ որ նրա վարքագիծը կարող է որակվել որպես խուլիգանություն, ոստիկանության՝ ցուցարարին ազատությունից զրկելու գործողությունները եղել են անօրինական: Ինչ վերաբերում է ոստիկանությունում նրան արգելանքի տակ պահելու ժամկետին (որը տեսել է երեք ժամից ավելի), Վարչական դատարանը, ի թիվս այլնի, վկայակոչել է վարչական կալանք սահմանելու ընթացակարգը կարգավորող դրույթները եւ գտել, որ ոստիկանությունը ցուցարարին ազատ չի արձակել նրան ազատությունից զրկելուց հետո երեք ժամվա ընթացքում եւ չի կազմել վարչական ձերբակալման կամ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն: Այսպիսով, Վարչական դատարանը եզրակացրել է, որ ցուցարար-հայցվորին ոստիկանությունում արգելանքի տակ պահելու ոստիկանության գործողությունները եղել են անօրինական:

## Ի. Վարչական դատարանի նախադեպային իրավունքը

79. Բացի վերը նշված գործից՝ կառավարությունը ներկայացրել է ներպետական գործելակերպի եւս տասնմեկ օրինակ (ամենահին վճիռը Վարչական դատարանի կողմից կայացվել է 2015 թվականին եւ դարձել է վերջնական 2015 թվականի հունիսի 2-ին) այն դեպքերի առնչությամբ, երբ անձինք ճանաչման հայց են ներկայացրել Վարչական դատարան՝ համաձայն Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի (տե՛ս վերելում՝ 62-րդ պարբերությունը)՝ պնդելով, ի թիվս այլնի, ազատության, ազատ արտահայտվելու եւ հավաքների ազատության իրենց իրավունքի խախտումը: Սույն գործերով հայցվորները (ցուցարարները եւ մի գործում՝ լրագրողը) ցույցի ժամանակ կամ հրապարակային միջոցառման ավարտին զրկվել են իրենց ազատությունից՝ բացառությամբ մեկ դեպքի, որը չէր ենթադրում ազատությունից զրկման փաստը: Վերջին գործով, երբ հայցվորը բողոքել էր, որ փոքր հավաքի ժամանակ ոստիկաններն իրեն թույլ չեն տվել քայլել այն մայթով (Նախագահի գրասենյակի տարածքին հարող), որտեղ տեղի է ունեցել հավաքը, Հայաստանի վերաքննիչ վարչական դատարանը գտել է, որ հայցվորի՝ հավաքների ազատության իրավունքին որեւէ միջամտություն չի եղել (թիվ ՎԴ/1043/05/16): Ինչ վերաբերում է մնացած տասը գործերին, բացի մեկ գործից (թիվ ՎԴ5/0027/05/18), որտեղ ցուցարարը զրկվել է ազատությունից քրեական հանցագործություն կատարելու կասկածանքով (քննարկվել է ստորել՝ 81-րդ պարբերությունում), մնացած բոլոր գործերը վերաբերել են լրագրողին (թիվ ՎԴ/2981/05/16) կամ ցուցարարներին (ընդհանուր առմամբ ութ գործ, տե՛ս ստորել՝ 80-րդ պարբերությունը) ազատությունից զրկելուն՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ կամ 259-րդ հոդվածների (վերելում հիշատակված՝ 59-րդ եւ 60-րդ պարբերությունները), որոնք հիմնված են վարչական վճարների վրա:

80. Վարչական դատարանը վերոնշյալ ութ գործերով քննել է, ի թիվս այլնի,

թե արդյոք օրինական են եղել ոստիկանության աշխատակիցների այն գործողությունները, որոնք ուղղված են եղել ցուցարարներին ազատությունից զրկելուն՝ վերջիններիս կողմից ոստիկանության ծառայողների օրինական պահանջները չկատարելու համար, որն էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180-րդ հոդվածի 15-րդ մասի կամ 182-րդ հոդվածի իմաստով վարչական իրավախախտում է համարվում (տե՛ս վերելում՝ 57-րդ եւ 58-րդ պարբերությունները): Եթե Վարչական դատարանը գտնի, որ ոստիկանության գործողությունները, իսկապես, եղել են անօրինական՝ կախված գործի հանգամանքներից, ապա նա կհայտարարի, որ այդ գործողությունները, ի թիվս այլնի, խախտել են ազատության, ազատ արտահայտվելու կամ հավաքների ազատության իրենց իրավունքները: Հատկանշական է, որ սույն գործերից չորսում (թիվ ՎԴ/7759/05/18, ՎԴ/11083/05/18, ՎԴ/0500/05/19 եւ ՎԴ/0538/05/19) Վարչական դատարանը, ի թիվս այլնի, քննել է հայցվորների բողոքներն այն մասին, որ իրենց ազատությունից զրկելու հետ կապված գործողությունը, համաձայն վարչական իրավունքի (մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-259 հոդվածները), եղել է անօրինական, սակայն չի անդրադարձել նրանց այն փաստարկներին, որոնք վերաբերում էին հավաքների ազատության իրավունքին. մեկ այլ գործով (թիվ ՎԴ/3313/05/14) Վարչական դատարանը, գտնելով, որ հայցվորների վարչական կալանքը եղել է անօրինական, այն համարել է, որ նրանց հավաքների ազատության իրավունքին որեւէ միջամտություն չի եղել, քանի որ ցույցի ավարտից հետո հայցվորները ձերբակալվել են:

Ինչ վերաբերում է մնացած երեք գործերին, դրանցից մեկով (թիվ ՎԴ/3222/05/16) Վարչական դատարանը գտել է, որ հայցվորի՝ հավաքների ազատության իրավունքին միջամտությունը եղել է օրինական, անհրաժեշտ եւ համաչափ: Չնայած ոստիկանների հրահանգին՝ ազատել ճանապարհը եւ ցույցն անցկացնել մայթին, հայցվորը չի դադարել փակել ճանապարհը: Միաժամանակ դատարանը գտել է, որ խախտվել է նրա ազատության իրավունքը, քանի որ նրա վարչական կալանքը տեւել է օրենքով նախատեսվածից ավելի երկար: Ինչ վերաբերում է մնացած երկու գործերին, դրանցից մեկով Վարչական դատարանը

գտել է, որ ոստիկանության գործողությունները, որոնք արգելում էին ցուցարարին կազմակերպել ցույց, ինչպես նաև նրա հետագա վարչական կալանքը եղել են անօրինական (թիվ ՎԴ/2952/05/14), իսկ մյուս գործով (թիվ ՎԴ/3263/05/15) Վարչական դատարանը գտել է, ի թիվս այլնի, որ գործի նյութերում չի եղել որեւէ ապացույց, որ ոստիկանությունը որեւէ հրահանգ է տվել հայցվոր-ցուցարարին, ուստի նրա նկատմամբ կիրառված հետագա վարչական կալանքը չի համապատասխանել օրենքին: Դատարանը եզրակացրել է, որ ոստիկանության գործողությունները՝ հայցվորի ազատության, ազատ արտահայտվելու եւ հավաքների ազատության իր իրավունքին միջամտելը, եղել են անօրինական:

81. Ի վերջո, վերոնշյալ թիվ ՎԴ5/0027/05/18 գործով Վարչական դատարանը, քննելով ցուցարարին ենթադրյալ ազատությունից զրկելու փաստը, երբ ոստիկանները կանգնեցրել են նրա մեքենան՝ ապօրինի զենք պահելու մեղադրանքով (քրեական հանցագործություն), գտել է, որ ոստիկանությունը չունի բավարար հիմնավոր կասկած՝ արդարացնելու իր գործողությունները: Դատարանը համարել է, որ ոստիկանության գործողությունները եղել են անօրինական եւ, ի թիվս այլնի, խախտել են հայցվոր-ցուցարարի հավաքների ազատության եւ ազատ տեղաշարժի իրավունքները: Բողոքարկման վարույթի արդյունքում Վերաքննիչ վարչական դատարանն անփոփոխ է թողել սույն որոշումը՝ նշելով, որ ցուցարարին ազատությունից զրկելու գործողությունն իրականացվել է վարչական իրավունքի խախտմամբ (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ հոդված, տե՛ս վերելում՝ 59-րդ պարբերությունը): Հայցվորի ազատության իրավունքին անօրինական կերպով միջամտելու պատճառով նա չի կարողացել մասնակցել ցույցին. այսպիսով, ոստիկանությունը խախտել է ազատ արտահայտվելու եւ հավաքների ազատության իր իրավունքը:

82. Կառավարությունը նաև ներկայացրել է ներպետական նախադեպային իրավունքի եւս հինգ օրինակ, երբ ճանաչման հայցը բավարարելուց հետո հայցվորները ոստիկանությունից պահանջել են փոխհատուցում ոչ նյութական վնասի համար՝ ի թիվս այլնի, իրենց ազատության իրավունքի (բոլոր հինգ

գործերով) կամ հավաքների ազատության իրավունքի խախտման համար (ներկայացված հինգ գործերով՝ միայն երկուսում):

## II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

### Ա. Միավորված ազգերի կազմակերպություն

83. Իրավապահ մարմինների կողմից ուժի եւ հրազենի կիրառման վերաբերյալ հիմնական սկզբունքների 13-րդ սկզբունքը, որն ընդունվել է 1990 թվականի սեպտեմբերի 7-ին հանցագործությունների կանխարգելման եւ իրավախախտների հետ վարվելաձեւերին նվիրված՝ Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ կոնգրեսում, համաձայն որի.

«13. Անօրինական, բայց խաղաղ հավաքները ցրելու ժամանակ իրավապահ մարմինները պետք է խուսափեն ուժի կիրառումից, եթե դա հնարավոր չէ, ապա ուժը պետք է կիրառվի անհրաժեշտ նվազագույն չափով»:

84. Իրավապահ մարմիններում պակաս մահացու զենքերի վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների ուղեցույցի համապատասխան պարբերությունը՝ հրապարակված 2020 թվականի հունիսի 1-ին Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից, ունի հետեւյալ բովանդակությունը (ծանոթագրությունները բաց են թողնված).

«7.7.2. Ընդհանուր առմամբ, ջրցան մեքենաները պետք է օգտագործվեն միայն զանգվածային լուրջ անկարգությունների ժամանակ, որտեղ կա կյանքի կորստի, լուրջ վնասվածքի կամ գույքի համատարած ոչնչացման զգալի հավանականություն: Անհրաժեշտության եւ համաչափության պահանջները բավարարելու համար ջրցան մեքենաների օգտագործումը պետք է մանրակրկիտ կերպով պլանավորվի եւ իրականացվի բարձրագույն ղեկավարության խիստ հրամանատարության եւ վերահսկողության ներքո:

### Բ. Եվրոպայի խորհուրդ

85. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2435 բանաձևի (2022 թվական) համապատասխան հատվածը, որը վերաբերում է իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի ավելորդ եւ անհարկի կիրառման դեմ պայքարին եւ կանխարգելմանը՝ ընդունված 2022 թվականի ապրիլի 27-ին, ունի հետևյալ բովանդակությունը.

«9. Այսպիսով, Վեհաժողովը կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին եւ դիտորդ պետություններին, հարկ եղած դեպքում,

...

9.3. ապահովել, որ իրավապահ մարմինների կողմից զենքերի եւ այլ մահացու կամ ոչ մահացու գործիքների օգտագործումը մանրամասնորեն կարգավորվի իրենց ազգային օրենսդրությամբ, որով պետք է սահմանվեն հրահանգներ եւ չարաշահման դեմ երաշխիքներ»:

86. 2014 թվականի փետրվարի 25-ին Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը հրատարակել է մարդու իրավունքների վերաբերյալ մեկնաբանություն՝ «Ոստիկանության չարաշահումները՝ օրենքի գերակայության համար լուրջ սպառնալիք» վերնագրով: Մեկնաբանությունն այնքանով, որքանով այն վերաբերելի է, ունի հետևյալ բովանդակությունը.

«Պետությունները պետք է մշակեն հստակ ուղեցույցներ ոստիկանության կողմից ուժի համաչափ կիրառման վերաբերյալ, ներառյալ՝ արցունքաբեր գազի, պղպեղի սփռելի, ջրցան մեքենաների եւ հրազենի կիրառումը ցույցերի համատեքստում՝ միջազգային չափանիշներին համապատասխան»:

#### **Գ. Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց**

87. Խաղաղ հավաքների ազատության ուղեցույցները (երրորդ հրատարակություն, 2019 թվական), որոնք մշակվել են Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի կողմից՝ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) հետ խորհրդակցության միջոցով,



այնքանով, որքանով վերաբերելի են, ունեն հետեւյալ բովանդակությունը.

«181. Ուժի կիրառումը կարգավորող սկզբունքները. Ուժը պետք է կիրառվի միայն անհրաժեշտ նվազագույն չափով՝ զսպման, համաչափության, վնասի նվազեցման եւ կյանքի պահպանման սկզբունքներին համապատասխան...

...

185. Հատուկ միջոցներ՝ իրավապահ մարմինների կողմից հավաքների ընթացքում անկարգությունները վերահսկելու համար. Լավագույն գործելակերպի վերաբերյալ տվյալ ուղեցույցը հատուկ այն միջոցների վերաբերյալ է, որոնց օգնությամբ իրավապահ մարմինների աշխատակիցները կարող են վերահսկել կամ փորձել վերականգնել վերահսկողությունը հավաքի նկատմամբ, երբ այն դառնում է անկառավարելի, հիմնված է ազգային ոստիկանական ինստիտուտներում զարգացող գործելակերպի վրա.

...

Պլաստիկ/ռետինե փամփուշտների, գլանաձեւ փամփուշտներով պարկուճի, լուսաձայնային նռնակների, ջրցան մեքենաների եւ ամբոխի վերահսկման այլ ուժային մեթոդների կիրառումը պետք է խստորեն կարգավորվի եւ արձանագրվի...»:

## **Դ. Միջազգային կազմակերպությունների արձագանքը 2015 թվականի հունիսի 23-ի նստացույցը ցրելու վերաբերյալ.**

88. 2015 թվականի հունիսի 25-ին Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի խոսնակ Ռավինա Շամդասանին հայտարարություն է տարածել նստացույցի<sup>6</sup> ժամանակ հայ ոստիկանների կողմից ուժ կիրառելու վերաբերյալ, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Մենք անհանգստացած ենք հունիսի 23-ին Երեւանում տեղի ունեցած բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանության աշխատակիցների կողմից, այդ թվում՝ լրագրողների նկատմամբ անհամաչափ ուժի գործադրման վերաբերյալ հավաստի հաղորդման

6 <https://www.ohchr.org/en/press-briefing-notes/2015/06/press-briefing-note-armenia>  
թարմացումը՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ին)

(վերջին

առնչությամբ եւ կոչ ենք անում իշխանություններին մանրակրկիտ եւ արագ քննություն կատարել այդ միջադեպերի վերաբերյալ:

Քանի որ երկրում շարունակվում են բողոքի ցույցերը, կառավարությունը պետք է խստորեն պահպանի մարդու իրավունքների միջազգային նորմերը եւ չափանիշները, այդ թվում՝ իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագծի կանոնները եւ իրավապահ մարմինների կողմից ուժի եւ հրազենի կիրառման հիմնական սկզբունքները:

Մենք ողջունում ենք Հայաստանի արտաքին գործերի նախարարի հայտարարությունը, որն արտահայտում է Կառավարության հանձնառությունը «Հայաստանում ժողովրդավարությանը, հիմնարար ազատություններին եւ մարդու իրավունքների պաշտպանությանը»: Մենք կոչ ենք անում Կառավարությանը ապահովել, որ այդ հանձնառությունն արտահայտվի այնպես, ինչպես Կառավարությունն է արձագանքում այդ բողոքի ցույցերին, եւ մենք խրախուսում ենք բոլոր կողմերին ներգրավվել կառուցողական երկխոսության մեջ եւ զերծ մնալ բռնությունից»:

89. ԵԱՀԿ Ժողովրդավարական կառույցների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրենը 2015 թվականի հունիսի 24-ին հայտարարություն<sup>7</sup> է տարածել նստացույցը ցրելու վերաբերյալ, որի համապատասխան հատվածն ունի հետևյալ բովանդակությունը.

«...

Երեկ առավոտյան իրավապահ մարմինների գործողությունների մասին հաղորդումները, ներառյալ՝ հարյուրավոր խաղաղ ցուցարարների դեմ ջրցան մեքենաների կիրառումը եւ նրանց ձերբակալությունները, խորապես մտահոգիչ են:

...

Իրավապահ մարմինները պարտավոր են նպաստել խաղաղ հավաքների անցկացմանը, եւ ոստիկանության ցանկացած գործողություն պետք է լինի օրինական, անհրաժեշտ եւ համաչափ: Ուժի անհամաչափ կիրառման, անհիմն կամ զանգվածային ձերբակալությունների մասին բոլոր մեղադրանքները պետք է ենթարկվեն անաչառ, մանրակրկիտ եւ անհապաղ քննության՝ մեղավորներին պատասխանատվության

---

<sup>7</sup> <https://www.ohchr.org/en/press-briefing-notes/2015/06/press-briefing-note-armenia> (last accessed on 18 December 2024)

ենթարկելու համար»:

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

### I. ԿՈՆՎԵՆՅԱՅԻ 3-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

90. Դիմումատուն, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն, բողոքել է, որ ոստիկանությունում բերման է ենթարկվել եւ պահվել երկարատեւ ժամանակահատված թաց հագուստով, առանց սննդի կամ հանգստի ժամանակի, ինչը հավասարազոր է եղել անմարդկային վերաբերմունքի: Հիմք ընդունելով 13-րդ հոդվածը՝ դիմումատուն, ըստ էության, բողոքել է, որ ինքը իրական հնարավորություն չի ունեցել ներպետական մակարդակով իր իրավունքները վերականգնելու համար: Դատարանը, հանդես գալով որպես գործի փաստերին օրենքով տրվելիք որակավորման մասնագիտացված կառույց (տե՛ս Ռոդամիլյան եւ այլք ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ] [Radomilja and Others v. Croatia [GC]] գործը, թիվ 37685/10 եւ 22768/12, § 126, 2018 թվականի մարտի 20) եւ հաշվի առնելով դիմումատուի փաստարկներն ընդհանուր առմամբ, համարում է, որ նրա բողոքի էությունը սույն գործի շրջանակներում ընդգրկված է Կոնվենցիայի 3-րդ հոդվածում, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

91. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել առկա իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նա ենթադրյալ վատ վերաբերմունքի մասին իր բողոքը ներկայացրել է միայն քրեական գործ հարուցելու վերաբերյալ իր դիմումի մեջ (տե՛ս վերելում՝ 20-րդ պարբերությունը) եւ չի պնդել այն դատախազի կամ դատարանի առջեւ: Նրանք նաեւ նշել են, որ դիմումատուն բողոք չի ներկայացրել (համապատասխանաբար Վճռաբեկ դատարան եւ Վերաքննիչ քրեական դատարան) Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 29-ի (տե՛ս վերելում՝ 36-րդ պարբերությունը) եւ Երեւանի քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի

2021 թվականի հունիսի 30-ի որոշումների դեմ (տե՛ս վերելում՝ 42-րդ պարբերությունը): Ավելին, համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի (տե՛ս վերելում՝ 55-րդ պարբերությունը), դիմումատուն կարող էր գանգատ ներկայացնել ներպետական քաղաքացիական դատարաններ՝ դաժան վերաբերմունքի չենթարկվելու իր իրավունքի խախտումը հաստատելու եւ համապատասխանաբար ոչ նյութական վնասի փոխհատուցում պահանջելու համար, սակայն նա այդպես չի վարվել: Նրանք ներկայացրեցին ներպետական իրավունքի գործելակերպի օրինակ, որտեղ արդարացված անձը բարեհաջող կերպով պահանջում էր փոխհատուցում կալանքի տակ գտնվելու հետեւանքով կրած ոչ նյութական վնասների եւ այն խցի պայմանների համար, որտեղ նա գտնվել էր կալանքի ընթացքում:

92. Ավելին, Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի՝ ենթադրաբար կրած վատ վերաբերմունքը չի հատել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված խստության շեմը:

93. Դիմումատուն պնդել է իր բողոքները (տե՛ս վերելում՝ 90-րդ պարբերությունը):

94. Դատարանը անհրաժեշտ չի համարում պարզել, թե արդյոք դիմումատուն սպառել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նրա բողոքն ամեն դեպքում անընդունելի է հետեւյալ պատճառներով: Իր քրեական բողոքում դիմումատուն պնդել է, որ ինքը ենթարկվել է անմարդկային եւ նվաստացուցիչ վերաբերմունքի, քանի որ բերման է ենթարկվել եւ պահվել ոստիկանությունում մի քանի ժամ թաց հագուստով, առանց սննդի կամ հանգստի հնարավորության (տե՛ս վերելում՝ 20-րդ պարբերությունը): Նա վերահաստատել է այդ բողոքները քննիչի որոշումների դեմ ուղղված իր վերաքննիչ բողոքներում, այնուամենայնիվ, 2016 թվականի մարտի 16-ին իր փաստաբանի ներկայությամբ անցկացված հարցաքննության ժամանակ (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը), դիմումատուն բացահայտ հայտարարել է, որ իրեն լավ են վերաբերվել

նուստիկանական բաժանմունքում, եւ որ ինքը չի մրսել՝ չնայած իր թաց հագուստին ( հակադրի՝ ր Դ. Հ.-ն եւ այլք ընդդէմ Հյուսիսային Մակեդոնիայի [D.H. and Others v. North Macedonia] գործը, թիվ 44033/17, § 37, 2023 թվականի հուլիսի 18): Այդ հանգամանքներից ելնելով՝ չի կարելի ասել, որ դիմումատուն ենթարկվել է որեւէ վերաբերմունքի, որը հակասում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածին: Ավելին, նրա բողոքը հիմնականում վերաբերել է այն ժամանակահատվածին, որ նա անցկացրել է ուստիկանության պահման վայրում, որը կքննարկվի ստորեւ բերված 144-162-րդ պարբերություններում:

95. Ուստի, այդ բողոքը առարկայական ընդդատության առումով (*ratione materiae*) անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, եւ հետեւաբար պետք է մերժվի 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՆԱՅԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԵՄ

### Ա. Կողմերի փաստարկները

96. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իր բողոքների առումով հասանելի իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նա չի ներկայացրել վերաքննիչ բողոք համապատասխանաբար Վճռաբեկ դատարան եւ Վերաքննիչ քրեական դատարան Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 29-ի (տե՛ս վերելում՝ 36-րդ պարբերությունը) եւ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունիսի 30-ի որոշումների դեմ (տե՛ս վերելում՝ 42-րդ պարբերությունը):

97. Կառավարությունը նաեւ պնդել է, որ թեւէ քրեական գործի քննությունը կարող էր շտկել Կոնվենցիայի 5-րդ եւ 11-րդ հոդվածների համաձայն դիմումատուի իրավունքների ենթադրյալ խախտումը, երբ քրեական գործի քննությամբ պարզվեր, որ ուստիկանության աշխատակիցների գործողություններում հանցակազմ չի եղել (տե՛ս վերելում՝ 31-րդ պարբերությունը), դիմումատուն պետք է դիմեր վարչական

պաշտպանության միջոցի կիրառմանը: Կառավարության կարծիքով, վարչական պաշտպանության միջոցը, ըստ էության, չի հետապնդել այն նպատակը, ինչ քրեական գործի քննությունը՝ ըստ Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի: Մասնավորապես դիմումատուն կարող էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ճանաչման հայց ներկայացնել Վարչական դատարան (տե՛ս վերելում՝ 62-րդ պարբերությունը) եւ պահանջել, որ ոստիկանության աշխատակիցների գործողությունները ճանաչվեն անօրինական: Կառավարությունը ներկայացրել է համապատասխան ներպետական նախադեպային իրավունքի տասներկու օրինակ (տե՛ս վերելում՝ 78-81-րդ պարբերությունները):

98. Կառավարությունը նաեւ պնդել է, որ Քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանի կողմից իր ազատության եւ հավաքների ազատության իր իրավունքների խախտման ճանաչումից հետո դիմումատուն կարող էր ստանալ ոչ նյութական վնասի փոխհատուցում (տե՛ս Կառավարության կողմից ներկայացված նախադեպային իրավունքի օրինակները՝ ամփոփված վերելում՝ 82-րդ պարբերությունում):

99. Դիմումատուն ի սկզբանե պնդել է, որ Դատարան ներկայացված իր բողոքների առնչությամբ չկան արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ: Այնուամենայնիվ, հետագայում նա կարծես համաձայնել է Կառավարության պնդման հետ, որ քրեական գործի քննությունը կարող էր անդրադառնալ իր բողոքներին՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի եւ 11-րդ հոդվածի համաձայն՝ իրավական պաշտպանության ներպետական կանոնների սպառման նպատակով: Այնուամենայնիվ, այն չի ապացուցել իր արդյունավետությունը տվյալ գործի կոնկրետ հանգամանքներում, քանի որ իշխանություններից պահանջվել է մոտ չորս տարի՝ պարզելու համար, որ նրա իրավունքները չեն խախտվել: Դիմումատուն պնդել է, որ իր բողոքները Վճռաբեկ դատարան չներկայացնելու պատճառն այն էր, որ իր համար արդեն իսկ ակնհայտ

Էր, որ իր վերաքննիչ բողոքներն անխուսափելիորեն ձախողվելու են: Ի պաշտպանություն սույն պնդմանը՝ նա բերել է մի ցուցարար ընկերոջ օրինակ, որը վիճարկել է համանման որոշումը մինչև Վճռաբեկ դատարան, սակայն ապարդյուն: Ըստ դիմումատուի՝ այն բանից հետո, երբ քննիչը որոշել է քրեական հետապնդում չիրականացնել ոստիկանության աշխատակիցների նկատմամբ՝ ցուցարարին բերման ենթարկելու համար (տե՛ս վերելում՝ 31-րդ պարբերությունը), քրեական վարույթն այլևս չի վերաբերել նրա իրավունքներին: Հետևաբար նա պարտավոր չէր վերաքննիչ բողոք ներկայացնել Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ (տե՛ս վերելում՝ 42-րդ պարբերությունը):

## Բ. Դատարանի գնահատականը

### *1. Ընդհանուր սկզբունքներ*

100. Դատարանը վերահաստատում է, որ 35-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է սպառել իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք վերաբերում են առաջադրված խախտմանը եւ կարող են փոխհատուցել ենթադրյալ խախտումը: Այդպիսի իրավական պաշտպանության միջոցների առկայությունը պետք է բավականաչափ որոշակի լինի ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում, այլապես դրանք չեն ունենա անհրաժեշտ հասանելիություն եւ արդյունավետություն (տե՛ս Արհմիության հարցերով Ժնևի համայնքն ընդդեմ Շվեյցարիայի [ՄՊ] [Communauté genevoise d'action syndicale (CGAS) v. Switzerland [GC]], թիվ 21881/20, §§ 139 and 143, 2023 թվականի նոյեմբերի 27, Վուչկովիչը եւ այլք ընդդեմ Սերբիայի (նախնական առարկություն) [ՄՊ] [Vučković and Others v. Serbia (preliminary objection)][GC] գործերը, թիվ 17153/11 եւ 29 այլ գործեր, § 71, 2014 թվականի մարտի 25, եւ Տեր-Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի [Ter-Petrosyan v. Armenia] գործը, թիվ 36469/08, § 55, 2019 թվականի ապրիլի 25): Արդյունավետ լինելու համար միջոցը պետք է լինի այնպիսին, որ ուղղակիորեն վերականգնի վիճարկվող գործերի ընթացքը եւ առաջարկի հաջողության ողջամիտ հեռանկարներ (տե՛ս վերելում հիշատակված՝ Արհմիության հարցերով Ժնևի

համայնքի [Communauté genevoise d'action syndicale (CGAS) գործը, § 139 եւ դրանում հիշատակված վճիռները):

101. Սակայն ինչպես նշվել է վերելում, չկա ոչ պատշաճ կամ անարդյունավետ միջոցներից օգտվելու պարտավորություն: Այս կապակցությամբ Դատարանը համարել է, որ, օրինակ, դիմումատուները ազատված են Կառավարության կողմից անդրադարձ կատարված իրավական պաշտպանության միջոցը սպառելու պարտավորությունից, եթե այն անպայմանորեն պետք է ձախողվեր, եւ դրա կիրառման համար առկա էին օբյեկտիվ խոչընդոտներ, կամ եթե դրա կիրառումը պետք է լիներ անհիմն եւ անհամաչափ խոչընդոտ կհանդիսանար Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված անհատական միջնորդության իրավունքի արդյունավետ իրականացման համար (նույն տեղում, § 141):

102. Ինչ վերաբերում է ապացուցման բեռին, ապա իրավական պաշտպանության միջոցները չսպառելու մասին պնդող Կառավարության պարտավորությունն է ապացուցել Դատարանին, որ իրավական պաշտպանության միջոցը եղել է արդյունավետ, ինչպես նաեւ համապատասխան պահին հասանելի եւ՝ տեսականորեն, եւ՝ գործնականում (նույն տեղում, § 143 եւ դրանում հիշատակված վճիռները): Գոյություն ունեցող իրավական պաշտպանության միջոցի հասանելիությունը, ներառյալ՝ դրա շրջանակը եւ կիրառումը, պետք է հստակորեն սահմանվի եւ հաստատվի կամ լրացվի գործնականորեն կամ նախադեպային իրավունքի միջոցով (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերելում հիշատակված՝ Ղերջինյան ընդդեմ Ռումինիայի [ՄՊ] [Gherghina v. Romania] (որոշում) [GC], թիվ 42219/07, § 88, 2015 թվականի հուլիսի 9, Մքֆարլեյն ընդդեմ Իռլանդիայի [ՄՊ], [ McFarlane v. Ireland] [GC], թիվ 31333/06, §§ 117 եւ 120, 2010 թվականի սեպտեմբերի 10, եւ Միկոլայովան ընդդեմ Սլովակիայի [Mikolayová v. Slovakia] գործերը, թիվ 4479/03, § 34, 2011 թվականի հունվարի 18): Այդպիսի նախադեպային իրավունքը սկզբունքորեն պետք է լավ հաստատված լինի եւ առնչվի գանգատը ներկայացնելուն նախորդող ժամանակաշրջանին (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերելում հիշատակված՝ Ղերջինայի [Gherghina], § 88,



Սուրմելին ընդդեմ Գերմանիայի [ՄՊ], [Sürmeli v. Germany [GC]] թիվ 75529/01, § 110, ՄԻԵԴ 2006 VII, Նորբերտ Ջիկորսկին ընդդեմ Լեհաստանի [Norbert Sikorski v. Poland], թիվ 17599/05, § 115, 2009 թվականի հոկտեմբերի 22, եւ Ջուրթերն ընդդեմ Ֆրանսիայի (որոշում) [Zutter v. France] (dec.), թիվ 197/96, 2000 թվականի հունիսի 27) եւ համապատասխան տվյալ գործին (տե՛ս Սախնովսկին ընդդեմ Ռուսաստանի [ՄՊ] [Sakhnovskiy v. Russia [GC]], թիվ 21272/03, § 44, 2010 թվականի նոյեմբերի 2, եւ վերելում հիշատակված՝ Տեր-Պետրոսյանի [Ter-Petrosyan] գործերը, § 57):

103. Այնուամենայնիվ, երբ դիմումատուի համար այդ ապացուցման բեռը թեթեւանա, նա պարտավորվում է ապացուցել, որ Կառավարության կողմից առաջարկվող իրավական պաշտպանության միջոցը, ըստ էության, օգտագործված է եղել կամ որոշ պատճառներով գործի կոնկրետ հանգամանքներում եղել է ոչ պատշաճ եւ անարդյունավետ, կամ որ առկա են եղել նրան այդ պահանջի կատարումից ազատող հատուկ հանգամանքներ (տե՛ս Սելահաթին Դեմիրթաշն ընդդեմ Թուրքիայի (թիվ 2) [ՄՊ] [Selahattin Demirtaş v. Turkey [GC]] գործը, թիվ 14305/17, § 205, 2020 թվականի դեկտեմբերի 22):

104. Այս համատեքստում ակնհայտորեն անարդյունավետ որոշակի իրավական պաշտպանության միջոցի հաջողության հեռանկարների վերաբերյալ սուկ կասկածների առկայությունը հիմնավոր պատճառ չէ հասանելի իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու համար (նույն տեղում, § 206): Ավելին, դիմումատուի համար, որն օգտվել է այդ իրավական պաշտպանության միջոցից, որը կարող էր ոչ միայն անուղղակիորեն, այլ նաեւ ուղղակիորեն շտկել իրավիճակը, որի առնչությամբ նա բողոք էր ներկայացրել, անհրաժեշտություն չի առաջացել դիմելու այլ միջոցների, որոնք կարող էին հասանելի լինել, բայց որոնց արդյունավետությունը կասկածի տակ էր (նույն տեղում): Եթե առկա են մի քանի իրավական պաշտպանության ներպետական միջոցներ, որոնցից անհատը կարող է օգտվել, ապա նա իրավունք ունի ընտրելու այն միջոցը, որն առնչվում է իր հիմնական դժգոհությանը: Այլ կերպ ասած, այն

դեպքում, երբ կիրառվել է մեկ միջոց՝ էապես նույն նպատակին հասնելու համար, մեկ այլ միջոցի կիրառում չի պահանջվում (տե՛ս Միկալեֆին ընդդեմ Մալթայի [ՄՊ] [Micallef v. Malta [GC]], թիվ 17056/06, § 58, 2009 թվականի հոկտեմբերի 15, եւ Քոհլերն ընդդեմ Գերմանիայի (որոշում) [Köhler v. Germany] (dec.), թիվ 3443/18, 2021 թվականի սեպտեմբերի 7, § 68):

105. Ինչ վերաբերում է ազատությունից զրկելու փաստի առնչությամբ իրավական պաշտպանության միջոցներին, ապա դատարանն արդեն հնարավորություն է ունեցել որոշում կայացնել այդպիսի բազմաթիվ գործերի վերաբերյալ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Կոլեվին ընդդեմ Բուլղարիայի (որոշում) [Kolevi v. Bulgaria] (dec.), 2007 թվականի դեկտեմբերի 4, Գավրիլ Յոսիֆովն ընդդեմ Բուլղարիայի [Gavril Yosifov v. Bulgaria], թիվ 74012/01, § 41, 2008 թվականի նոյեմբերի 6, Դոլենեցն ընդդեմ Խորվաթիայի [Dolenec v. Croatia], թիվ 25282/06, § 184, 2009 թվականի նոյեմբերի 26, Ռահմանին եւ Դինեւան ընդդեմ Բուլղարիայի [Rahmani and Dineva v. Bulgaria], թիվ 20116/08, § 66, 2012 թվականի մայիսի 10, եւ Բրյանը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի [Bryan and Others v. Russia] թիվ 22515/14, գործերը, § 67, 2023 թվականի հունիսի 27): Հաշվի առնելով Դատարանի այս ոլորտում ունեցած նախադեպային իրավունքը, որ երբ դիմումատուն բողոքում է, որ իրեն կալանավորել են ներպետական օրենսդրության խախտմամբ, եւ երբ կալանքն ավարտվել է, փոխհատուցման պահանջը, որը կարող է հանգեցնել ենթադրյալ խախտման ճանաչմանը եւ փոխհատուցման շնորհմանը, գործնականում արդյունավետ միջոց է, որը պետք է կիրառվի, եթե դրա արդյունավետությունն ապացուցված է (տե՛ս, վերելում հիշատակված՝ Սելահաթին Դեմիրթաշի [Selahattin Demirtaş], § 208, եւ Ձերկոլաշվիլին եւ այլք ընդդեմ Վրաստանի [Dzerkorashvili and Others v. Georgia] թիվ 70572/16, գործերը, § 78, 2023 թվականի մարտի 2):

106. Ավելին, ինչ վերաբերում է իրավական պաշտպանության ներպետական միջոցների արդյունավետությանը հավաքների ազատության կոնկրետ ոլորտում, Դատարանը պահանջում է, որ ներպետական օրենսդրությունը համապատասխան եւ արդյունավետ իրավական երաշխիքներ տրամադրի գործադիր իշխանությանը

թողնված հայեցողական լիազորությունների կամայական եւ խտրական իրականացման դեմ: Այդ դատական վերանայումը պետք է հնարավորություն տա գնահատել վիճարկվող սահմանափակման համաչափությունը եւ անհրաժեշտությունը՝ 11-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով (տե՛ս, համապատասխան փոփոխություններով, վերելում հիշատակված՝ Արհմիության հարցերով Ժնևի համայնքի [ՄՊ] [Communauté genevoise d'action syndicale (CGAS) [GC]], § 146, եւ Լաշմանկինը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի [Lashmankin and Others v. Russia], թիվ 57818/09 գործերը եւ 14 այլ գործեր, § § 428 եւ 430, 2017 թվականի փետրվարի 7):

## *2. Սույն գործով նշված սկզբունքների կիրառումը*

### **ա) 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բողոքների առնչությամբ իրավական պաշտպանության միջոցների սպառումը**

107. Դատարանը նշել է, որ նախկինում մերժել է Հայաստանի Կառավարության կողմից ներկայացված՝ իրավական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ առարկությունները (թեեւ տարբեր փաստական հանգամանքներում), այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ազատությունից զրկելու փաստի օրինականությանը, որը կատարվել է քրեական հանցագործություն կատարելու կասկածանքով (տե՛ս վերելում հիշատակված՝ Մուշեղ Սաղաթելյանի [Mushegh Saghatelyan], § 175-78, եւ Ջհանգիրյանն ընդդեմ Հայաստանի [Jhangiryan v. Armenia] գործերը, թիվ 44841/08 եւ 63701/09, § § 74 եւ 76, 2020 թվականի հոկտեմբերի 8): Սույն գործով Կառավարությունը տարբեր առարկություններ է ներկայացրել իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ (տե՛ս վերելում՝ 96-98 պարբերությունները): Դատարանը կանդրադառնա դրանց ստորեւ:

*i) Այդ առարկություններն ամփոփված են վերելում՝ 96-րդ*

*պարբերության մեջ*

108. Դատարանը նշել է, որ թիվ 62217915 քրեական գործը վերաբերում էր ոչ թե դիմումատուի ձերբակալության օրինականությունը գնահատելուն, այլ պարզելուն, թե արդյոք ոստիկանության աշխատակիցների գործողությունները, որոնք հանգեցրել են ոստիկանության բաժանմունքում նրա՝ այնտեղ գտնվելու երկարաձգմանը, պարունակում են քրեական հանցագործության տարրեր (մասնավորապես՝ պաշտոնեական դիրքի չարաշահում, տե՛ս վերելում՝ 30-րդ եւ 31-րդ պարբերությունները): Պաշտոնեական դիրքի չարաշահումը դիտավորյալ հանցագործություն է եւ պետք է դրդված լինի անձնական կամ խմբակային շահերից կամ անձնական շահից: Հետեւաբար քրեական գործի ընթացքն ուղղակիորեն չի առնչվում, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, դիմումատուի բողոքների հետ: Իրապես, հնարավոր է, որ անձին ազատությունից զրկելու փաստը կարող է չհամապատասխանել ներպետական իրավունքին կամ Կոնվենցիային՝ առանց նրանց կողմից պարտադիր (իրավապահ մարմինների կողմից) իրենց պաշտոնեական դիրքն անձնական շահի կամ այլ շահերի համար չարաշահելու մտադրության:

109. Վերոնշյալը հաստատվում է այն փաստով, որ ներպետական դատարանները վիճարկվող քրեական վարույթի համատեքստում չեն գնահատել՝ արդյոք դիմումատուին ազատությունից զրկելու փաստը համապատասխանում է ներպետական իրավունքին, եւ արդյոք դա անհրաժեշտ է եղել տվյալ հանգամանքներում: Ավելին, նրանց գնահատականը սահմանափակվում էր՝ պարզելով՝ i) արդյոք ՀԲԾ քննիչը օբյեկտիվ եւ մանրակրկիտ գնահատել է ապացույցները՝ նախքան ոստիկանության աշխատակիցներին քրեական հետապնդման չենթարկելու վերաբերյալ որոշում կայացնելը, եւ (ii) արդյոք նա այդ որոշմամբ խախտել է դիմումատուի իրավունքները (տե՛ս վերելում՝ 35-րդ եւ 36-րդ պարբերությունները):

110. Հետեւաբար չի հաստատվել այն փաստը, որ տվյալ գործով, ըստ Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի, պաշտոնեական դիրքը

չարաշահելու համար քրեական գործ հարուցելը կարող էր արդյունավետ իրավական պաշտպանության միջոց հանդիսանալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դիմումատուի բողոքների նկատմամբ՝ 35-րդ հոդվածով սահմանված՝ սպառման կանոնի նպատակներով: Հետեւաբար դիմումատուից պահանջված չէր բողոք ներկայացնել Վերաքննիչ քրեական դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 29-ի որոշման դեմ:

111. Ինչ վերաբերում է դիմումատուի ենթադրյալ ձախողմանը՝ 2021 թվականի հունիսի 30-ի՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած որոշման դեմ բողոք ներկայացնելու հարցում (տե՛ս վերելում՝ 42-րդ պարբերությունը), Դատարանը նշում է, որ քննությունը կասեցնելու երրորդ որոշումը որեւէ կերպ չի ազդել դիմումատուի իրավունքների վրա, ինչպես հստակ նշված է այդ դատարանի որոշման մեջ:

*ii) Այդ առարկություններն ամփոփված են վերելում՝ 97-98-րդ պարբերություններում*

112. Ինչպես նշված է վերելում՝ 107-րդ պարբերությունում, Դատարանն արդեն գտել է, որ 2008 թվականից ի վեր ներպետական իրավունքով (եւ մասնավորապես՝ Քրեական դատավարության օրենսգիրքը) չի նախատեսվել հանցագործություն կատարելու կասկածանքով անձի՝ օրինական հիմքերով կալանավորման վերաբերյալ հետաքննություն կատարելու հնարավորություն (տե՛ս Մուշեղ Սաղաթելյանի [Mushegh Saghatelyan], § § 175-78, եւ վերելում հիշատակված՝ Ջհանգիրյանի [Jhangiryan] գործերը, § § 74 եւ 76): Հետեւաբար Դատարանը պետք է պարզի, թե արդյոք տվյալ պահին Կառավարության կողմից առաջարկված իրավական պաշտպանության միջոցը, այն է՝ Վարչական դատարան ճանաչման հայց ներկայացնելու հնարավորությունը՝ համաձայն Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի (տե՛ս վերելում՝ 62-րդ պարբերությունը), բավականաչափ որոշակի է, թե՛ ոչ, ոչ միայն

տեսականորեն, այլև գործնականում՝ դիմումատուի բողոքի առնչությամբ՝ համաձայն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի: Մասնավորապես Դատարանը պետք է ստուգի, որ խնդրո առարկա պաշտպանության միջոցի առկայությունը, շրջանակը եւ կիրառումը հստակորեն սահմանվել էլ հաստատվել կամ լրացվել են ներպետական գործելակերպի հիման վրա (տե՛ս վերելում՝ 100-102-րդ պարբերություններում բերված նախադեպային իրավունքի հղումները):

113. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն պետք է ճանաչման հայց ներկայացնել այն բանից հետո, երբ որոշում էր կայացվել ոստիկանության աշխատակիցներին քրեական հետապնդման չենթարկելու վերաբերյալ՝ նրանց գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով (տե՛ս վերելում՝ 31-րդ եւ 97-րդ պարբերությունները): Նրանք չեն հստակեցրել, թե արդյոք հնարավոր էր, որ դիմումատուն ճանաչման հայց ներկայացնել Վարչական դատարան՝ մինչև քրեական վարույթի ավարտը: Այնուամենայնիվ, նույն ցույցի վերաբերյալ նրանց կողմից ներկայացված նախադեպային իրավունքի օրինակում (քննարկված է ստորել՝ 116-րդ պարբերությունում) վարչական դատարանները վարույթ են ընդունել այդպիսի հայցը նույնիսկ այն դեպքում, երբ խնդրո առարկա քրեական գործի քննությունը դեռ ավարտված չէր<sup>8</sup>:

114. Դատարանը նաեւ նկատել է, որ Կառավարության կողմից հղում արված ճանաչման հայցը հնարավորություն է տվել վիճարկելու, ի թիվս այլնի, վարչական մարմնի կողմից այլևս չշարունակվող գործողությունները: Միեւնույն ժամանակ, որպեսզի հայցվորը ներկայացնի այդպիսի հայց, նա պետք է ունենա իրավաչափ շահ՝ շարունակելու այդ գործողությունները անօրինական ճանաչել, այսինքն՝ եթե 1) առկա է համանման գործողությունների իրականացման վտանգ համանման իրավիճակում, 2) հայտատուն մտադիր է պահանջել փոխհատուցում նյութական վնասի համար, կամ 3) դիմումատուն փորձել է վերականգնել իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Կառավարությունն իր հերթին չի բացատրել, թե ինչպես է դիմումատուն հիմնավորելու իր իրավաչափ շահը՝

<sup>8</sup> Թեև Վարչական դատարանն ի սկզբանե կասեցրել էր վարույթը՝ քրեական գործով ընթացող քննության պատճառով, սակայն Վերաքննիչ վարչական դատարանը բեկանեց այդ որոշումը:

իրեն ենթադրյալ ազատությունից ապօրինի զրկելն անօրինական ճանաչելու համար՝ հղում կատարելով 69-րդ հոդվածի 3-րդ մասի (1)-(3) պայմաններին, որոնցից ոչ մեկը, ըստ երեւոյթին, կիրառելի չէ սույն գործով (տե՛ս նաեւ վերելում հիշատակված՝ Տեր-Պետրոսյանի գործը, § 57, որտեղ Դատարանը, ի թիվս այլնի, հանգել է համանման եզրակացության գրեթե նույնական իրավական պաշտպանության միջոցի վերաբերյալ՝ նախկին Վարչական դատավարության օրենսգրքի համաձայն, թեւ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ բողոքի համատեքստում, տե՛ս ստորել՝ 122-րդ պարբերությունը): Այս առումով 2019 թվականին (այսինքն՝ սույն գործի դեպքերից ավելի քան չորս տարի անց), Հայաստանի Սահմանադրական դատարանը Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համարել է անհամատեղելի Սահմանադրության հետ այնքանով, որքանով այն հնարավորություն չի տալիս անձին ճանաչման հայց ներկայացնել՝ հիմնվելով ոչ նյութական վնասի փոխհատուցում պահանջելու իր մտադրության վրա (տե՛ս վերելում՝ 76-րդ պարբերությունը): Թեւ տվյալ ներպետական դրույթը դեռեւս փոփոխության չի ենթարկվել, Կառավարության կողմից ներկայացված նախադեպային իրավունքի երկու օրինակով (երկուսն էլ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման ետին թվով թվագրված) հայցվորները հիմնավորել են իրենց իրավաչափ շահը՝ ճանաչման հայց ներկայացնելու նպատակով (Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն), ի թիվս այլնի, նշելով ոչ նյութական վնասի փոխհատուցում պահանջելու իրենց մտադրությունը: Հետեւաբար, նախեւառաջ, հարց է առաջանում, թե արդյոք խնդրո առարկա գործի դեպքերով իրավական պաշտպանության միջոցը հստակորեն սահմանված էր եւ հասանելի օրենսդրությամբ՝ դիմումատուի բողոքների առնչությամբ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

115. Ինչ վերաբերում է Կառավարության կողմից նշած ներպետական գործելակերպի օրինակներին՝ բացառությամբ ստորել նշված 116-րդ պարբերությունում քննարկված երկու նախադեպային իրավունքի օրինակների, նախադեպային իրավունքի հիմնական մասը (տե՛ս վերելում՝ 79-80-րդ

պարբերությունները) վերաբերում է ազատությունից զրկման փաստին՝ վարչական իրավունքի շրջանակներում (մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ եւ 259-րդ հոդվածները, տե՛ս վերելում՝ 59-րդ եւ 60-րդ պարբերությունները), որը կատարվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում, այլ ոչ թե ազատությունից զրկման փաստին՝ քրեական հանցագործություն կատարելու կասկածանքով: Դատարանի կարծիքով, նշված նախադեպային իրավունքի օրինակները չեն համապատասխանում սույն գործին, քանի որ դրանք չեն լուսաբանում այն հարցը, թե արդյոք Վարչական դատարանն իրավասու է քննելու բողոքները, որոնք առնչվում են անձին ազատությունից զրկելու փաստին (քրեական դատավարության կանոնների համաձայն)՝ քրեական հանցագործություն կատարելու կասկածանքով:

116. Միեւնույն ժամանակ, Կառավարության կողմից ներկայացված նախադեպային իրավունքի օրինակներից մեկում (տե՛ս վերելում՝ 81-րդ պարբերությունը) Վարչական դատարանը վճռել է, որ ոստիկանությունը բավարար հիմնավոր կասկած չի ունեցել կանգնեցնելու հայցվորի մեքենան՝ ապօրինի զենք պահելու մեղադրանքով: Վերաքննիչ վարչական դատարանը վճռել է, որ հայցվորին ոստիկանությունում արգելանքի տակ պահելը եղել է վարչական իրավունքի խախտում, մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն (վերելում հիշատակված՝ 59-րդ պարբերությունը):

117. Ավելին, մեկ այլ նախադեպային իրավունքի օրինակով, որը վերաբերում էր 2015 թվականի հունիսի 22-23-ը նույն ցույցի ընթացքում ցուցարարի կողմից ներկայացված ճանաչման հայցին, Վարչական դատարանը քննել է նաեւ ազատությունից զրկելու փաստի օրինականությունը, որն իրականացվել է տվյալ անձի հանդեպ վերը նշված քրեական հանցագործությունը կատարելու, մասնավորապես՝ խուլիգանության կասկածանքով (տե՛ս վերելում՝ 78-րդ պարբերությունը): Սույն գործով Վարչական դատարանը գտել է նաեւ, որ ոստիկանությունը ողջամիտ կասկածներ չի ունեցել ցուցարարին ազատությունից



գրկելու համար: Այսպիսով, Վարչական դատարանը ընդունել է ընդդատությունը եւ գործն ըստ էության քննել ազատությունից գրկելու փաստի օրինականության մասով, որը կիրառվել է հայցվորի նկատմամբ՝ քրեական հանցագործություն կատարելու կասկածանքով: Դատարանը, սակայն, նկատում է, որ դա արել է՝ ըստ էության հայցվորին ազատությունից գրկելու փաստը որակելով որպես վարչական կալանք: Վարչական դատարան, մասնավորապես անդրադարձել է վարչական կալանքի ընթացակարգը կարգավորող դրույթներին եւ գտել է, որ ոստիկանության գործողությունները եղել են անօրինական, քանի որ հայցվորն ազատ չի արձակվել վարչական կալանքի համար սահմանված առավելագույն ժամկետում, եւ չի կազմել վարչական կալանքի վերաբերյալ արձանագրություն կամ վարչական իրավախախտման մասին արձանագրություն (նույն տեղում): Այնուամենայնիվ, դիմումատուն սույն գործով ազատությունից գրկվել է քրեական հանցագործություն կատարելու կասկածանքով, այլ ոչ թե որեւէ վարչական իրավախախտման հիմքով (տե՛ս վերելում՝ 21-րդ, 23-րդ եւ 26-27-րդ պարբերությունները): Հետեւաբար, թեւէ չի եղել որեւէ հիմք ենթադրելու, որ ոստիկանության կողմից ցույցը ցրելը կարող է իրենից ենթադրել վարչական պատասխանատվության միջոց, դիմումատուն ողջամտորեն չէր կարող կանխատեսել, որ վարչական իրավունքը կարող է կիրառելի լինել իրեն ազատությունից գրկելու փաստի առնչությամբ՝ հանցագործություն կատարելու կասկածանքով, եւ որ նա կարող է այն վիճարկել Վարչական դատարանում:

118. Հաշվի առնելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների հիմնարար կարեւորությունը՝ ժողովրդավարական երկրներում անհատների համար իշխանությունների ձեռքում կամայական ազատազրկումից ազատ լինելու իրավունքն ապահովելու նպատակով (տե՛ս Էլ-Մասրին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության [ՄՊ] [El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia [GC]] գործը, թիվ 39630/09, § 230, ՄԻԵԴ 2012 թվական), այն իրավական պաշտպանության միջոցները, որոնք նախատեսված են ազատությունից գրկելու փաստի օրինականությունը վիճարկելու համար, պետք է հստակորեն սահմանված լինեն ներպետական օրենսդրությամբ եւ գործնականում:

Հետեւաբար 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դիմումատուի բողոքի առնչությամբ չի կարելի ասել, որ տվյալ ժամանակում դիմումատուն կարող էր ողջամտորեն կանխատեսել, որ կարող էր հնարավորություն ունենալ Վարչական դատարանում վիճարկելու իրեն ազատությունից զրկելու փաստը՝ քրեական հանցագործություն կատարելու կասկածանքով:

119. Ըստ այդմ, Դատարանը հարկ չի համարում քննել, թե արդյոք դիմումատուն հնարավորություն է ունեցել պահանջելու փոխհատուցում ոչ նյութական վնասի դիմաց: Կառավարության կարծիքով, այդպիսի հնարավորությունը կախված է եղել ճանաչման հայցի քննության ընթացքի հաջողությունից, որը, ինչպես նշված է վերելում, տվյալ ժամանակում չի հանդիսացել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց դիմումատուի բողոքների առնչությամբ՝ համաձայն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի:

*iii) Եզրակացություն*

120. Վերոնշյալի լույսի ներքո՝ դատարանը մերժում է սպառած չլինելու վերաբերյալ Կառավարության առարկությունները:

**բ) 11-րդ հոդվածի համաձայն բողոքների առնչությամբ իրավական պաշտպանության միջոցների սպառումը**

121. Կառավարության առարկությունը ճանաչման հայցի վերաբերյալ՝ համաձայն Վարչական դատավարության օրենսգրքի (տե՛ս վերելում՝ 97-98-րդ պարբերությունները):

122. Ինչպես նշվել է վերելում, Դատարանն արդեն քննել է համանման իրավական պաշտպանության միջոցը բողոքի առնչությամբ՝ համաձայն 13-րդ հոդվածի հետ համատեղ ընդունված 11-րդ հոդվածի: Մասնավորապես Տեր-Պետրոսյանի գործով (վերելում հիշատակված) Կառավարությունը պնդել է, որ ճանաչման հայցը, որը ներկայացվել է նախկին Վարչական դատավարության

օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն (նույն տեղում, վերելում՝ § 30) իրավական պաշտպանության արդյունավետ միջոց կլինի դիմումատուի կողմից ներկայացրած բողոքների առնչությամբ, որոնք վերաբերում էին հավաքների ազատության իրավունքի ենթադրյալ խախտմանը (նույն տեղում՝ § 49): Դատարանի կողմից ներկայացվել են հետևյալ դիտարկումները.

«57. Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ թեև Կառավարությունը ներկայացրել է իր փաստարկը հիմնավորող երեք վճիռների կրկնօրինակները, ոչինչ չի ենթադրում, որ այդ վճիռները Վարչական դատարանի կողմից կայացվել են Վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով: Փաստորեն, վճիռներից մեկում հստակորեն նշված է, որ հայցը ներկայացվել է Վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն, մինչդեռ մյուս երկու վճիռներում ոչինչ չի ասվում այդ մասին: Եվ որ ամենակարևորն է, բոլոր երեք վճիռները վերաբերում են միջամտող վարչական ակտերի դեմ ներկայացված վիճարկումներին, ինչպիսիք են Երևանի քաղաքապետի աշխատակազմի կայացրած որոշումը, որով արգելվում էր անցկացնել հանրահավաք՝ ի հակադրություն ցույցի ընթացքում իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված որևէ միջամտող գործողության, այդ թվում՝ դա ցրելը կամ ուժով դադարեցնելը: Հետևաբար Կառավարությունը չի ներկայացրել սույն գործին համանման իրավիճակում Վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի երբեք կիրառման որևէ օրինակ: Դա ավելի է խորացել այն փաստով պայմանավորված, որ այդ հոդվածի կիրառելիությունն այնպիսի իրավիճակների համար, ինչպիսին ներկայիս իրավիճակն է, նույնպես ակնհայտ չէ դրա ձեռակերպումից: Մասնավորապես, թեև այդ հոդվածի 3-րդ մասով նշվում է «այլևս իրավաբանական ուժ չունեցող» միջամտող վարչական գործողությունը անօրինական ճանաչելու հնարավորությունը, սա կիրառվում է միայն այն գործողության նկատմամբ, որն «այլևս իրավաբանական ուժ չունի», եւ որն անօրինական ճանաչելու մեջ, կախված «ա» կետից «գ» կետերում նշված որոշակի պայմաններից, դիմումատուն իրավաչափ շահ ունի, որոնցից ոչ մեկը սույն գործով, կարծես թե, առկա չէ: Հետևաբար հստակ չէ, թե արդյոք 68-րդ հոդվածի 3-րդ մասը կարող էր կիրառվել ոստիկանության այնպիսի գործողությունների նկատմամբ, ինչպիսին է հավաքը ցրելը, ինչպես սույն գործով: Հաշվի առնելով այդպիսի անհստակությունը եւ ներպետական գործելակերպի օրինակների բացակայությունը՝ Դատարանը համարում է, որ Կառավարությունը չի ներկայացրել, եւ որևէ այլ պատճառներ չկան կարծելու համար, որ դիմումատուն ունեցել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, որը կվերաբերեր հավաքի ազատությանը միջամտելու իր իրավունքին:

123. Վերոհիշյալ նկատառումները, կապված Վարչական իրավախախտումների վերաբերյալ նախորդ օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի անհատականության հետ, տեղ են գտել նաև սույն գործում, քանի որ այն պարունակում է ձեռակերպումներ, որոնք գործնականում նույնական են Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի հետ (տե՛ս վերելում՝ 62-րդ պարբերությունը): Այսպիսով, ինչպես նշվել է դիմումատուի բողոքի վերաբերյալ 5-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում (տե՛ս վերելում՝ 114-րդ պարբերությունը), տվյալ ժամանակ դիմումատուն չէր կարող հիմնավորել իր իրավաչափ շահը՝ ներկայացնելով ճանաչման հայց՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, քանի որ այդ հոդվածի 1-ից 3-րդ կետերով սահմանված պայմաններից եւ ոչ մեկը կիրառելի չէր իր գործի շրջանակներում:

124. Միեւնույն ժամանակ Կառավարությունը ներկայացրել է նախադեպային իրավունքի տասներկու օրինակ՝ ցույց տալու համար, թե ինչպես են ընթացել ներպետական գործելակերպի զարգացումները, որ Վարչական դատարանն այժմ իրավասու է քննելու ճանաչման հայցերն ըստ էության, որոնք վերաբերում են, ի թիվս այլնի, անձի հավաքների ազատության նկատմամբ իրավունքին ոստիկանության կողմից ենթադրյալ միջամտությանը (տե՛ս վերելում՝ 78-81-րդ պարբերությունները): Դատարանը նկատում է, որ հավաքների ազատության իրավունքի ենթադրյալ խախտումներին առնչվող տասնմեկ գործերից չորսում Վարչական դատարանը, ի թիվս այլնի, քննել է հայցվորների բողոքները՝ նրանց ազատությունից զրկելու փաստի օրինականության մասով, սակայն առանց որոշում կայացնելու նրանց փաստարկների վերաբերյալ, որոնք առնչվում էին նրանց հավաքների ազատության իրավունքի ենթադրյալ խախտումներին. երկու այլ գործերով Դատարանը որոշել է, որ որեւէ միջամտություն չի եղել հայցվորների հավաքների ազատության իրավունքին (տե՛ս վերելում՝ 79-80-րդ պարբերությունները): Այնուամենայնիվ, նախադեպային իրավունքի մնացած հինգ օրինակներում (որոնցից մեկն առնչվում էր 2015 թվականի հունիսի 22-23-ի նույն նստացույցի ցուցարարի կողմից ներկայացված ճանաչման հայցին, տե՛ս վերելում՝

78-րդ պարբերությունը) Վարչական դատարանը քննել է հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ բողոքների էությունը (տե՛ս վերելում՝ ներպետական նախադեպային իրավունքի 78-81-րդ պարբերությունների ամփոփագիրը): Դատարանն այնուհետև նկատում է, որ Կառավարության կողմից ներկայացված գործերից ոչ մեկով (ներառյալ այն գործերը, որոնք չեն վերաբերում հավաքների ազատության իրավունքի մասին բողոքներին) Վարչական դատարանը չի մեկնաբանել 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ից 3-րդ կետերում սահմանված պայմանները որպես խոչընդոտ այդ բողոքների էության քննությանը: Ավելին, Վարչական դատարանը կա՛մ չի անդրադարձել տվյալ գործով այդ պայմանների կիրառելիության հարցին, կա՛մ դա արել է հակիրճ՝ նշելով հայցվորների կողմից այդ առնչությամբ բերված փաստարկները (որոնք հիմնվել են կա՛մ 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի վրա, կա՛մ «վնասի փոխհատուցում պահանջելու» իրենց մտադրության վրա): Այսպիսով, չնայած վերելում հիշատակված 123-րդ պարբերության մեջ նշված՝ օրենքի համատեքստում անհատականությանը՝ ճանաչման հայցի առնչությամբ ներպետական գործելակերպի զարգացումներն ընթացել են այնպես, որ Վարչական դատարանը պետք է քննի անձի հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ բողոքները եւ կախված գործի հանգամանքներից՝ պետք է հայտարարի ոստիկանության գործողությունները (այդ իրավունքին միջամտելու) անօրինական (ինչպես վկայում են նախադեպային իրավունքի չորս օրինակները, հինգերորդ գործով, ընդհակառակը, Վարչական դատարանը, ըստ էության, գտել է, որ հայցվորի հավաքների ազատության իրավունքին միջամտելը սահմանված է եղել օրենքով, անհրաժեշտ է եւ համաչափ՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, տե՛ս վերելում՝ 78-րդ եւ 80-81 -րդ պարբերությունները):

125. Ճշմարիտ է, որ Կառավարության կողմից ներկայացված նախադեպային իրավունքի միայն մեկ օրինակով Վարչական դատարանը ձեռնամուխ է եղել գնահատելու հայցվորի՝ հավաքների ազատության իրավունքին միջամտելու անհրաժեշտությունը եւ համաչափությունը, մնացած գործերով Դատարանը չի շարունակել իր գնահատումը՝ բացի այն հանգամանքից, որ միջամտությունը եղել

է անօրինական (տե՛ս վերելում՝ 78-րդ եւ 80-81-րդ պարբերությունները): Այնուամենայնիվ, այս մոտեցումը իրավաբանորեն հիմնավորված է թվում: Սույն գործով առկա չէ որեւէ նշում այն մասին, որ Վարչական դատարանի կողմից կատարված գնահատումը սահմանափակվել է միայն վիճարկվող վարչական միջոցի ձեւական օրինականությամբ: Այն կարող է ներառել այնպիսի ասպեկտների ուսումնասիրություն, ինչպիսիք են անհրաժեշտությունը եւ համաչափությունը: Հետեւաբար, հաշվի առնելով իրեն ներկայացված ներպետական գործելակերպը, Դատարանը եզրակացնում է, որ Վարչական դատարանը պատշաճ կերպով կարողացել է քննել բողոքի էությունը՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն (համեմատի՛ր, համապատասխան փոփոխություններով, Պ. Ս.-ն ընդդեմ Իռլանդիայի, թիվ 26922/19, § 107, 2022 թվականի սեպտեմբերի 1):

126. Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ բացառությամբ մեկ գործի, որի վերաբերյալ Վարչական դատարանը որոշում է կայացրել 2015 թվականի ապրիլի 30-ին (եւ ուժի մեջ է մտել 2015 թվականի հունիսի 2-ին, տե՛ս վերելում՝ 79-րդ պարբերությունը), Կառավարության կողմից ներկայացված մնացած չորս գործերով որոշում է կայացվել այդ դատարանի կողմից եւ վերջնական է դարձել 2016 թվականից 2021 թվականների ընթացքում՝ ներկա գործով խնդրո առարկա իրադարձություններից հետո: Այս կապակցությամբ Դատարանը վերահաստատում է, որ տվյալ իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը հիմնականում գնահատվում է՝ հղում կատարելով գանգատի ներկայացման ամսաթվին (տե՛ս վերելում հիշատակված՝ Արհմիության հարցերով Ժնևի համայնքի գործը (ԱԺՀՇ) [Communauté genevoise d'action syndicale (CGAS)], § 158 եւ դրանում հիշատակված վճիռները): Այնուամենայնիվ, ըստ Վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի (տե՛ս վերելում՝ 63-րդ պարբերությունը), ճանաչման հայցի ներկայացման վաղեմության ժամկետը, Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, հինգ տարի է այն պահից, երբ խնդրո առարկա գործողությունն ավարտվել է: Դիմումատուն իր հերթին չի մատնանշել

որեւէ կոնկրետ հանգամանք, որը կազատեր իրեն համապատասխան պահին նշված պաշտպանության միջոցները սպառելու պարտավորությունից՝ մինչեւ դատարան դիմելը: Դատարանը վերահաստատում է, որ միայն կասկածների առկայությունը տվյալ իրավական պաշտպանության միջոցի հաջողության հեռանկարների վերաբերյալ, երբ այն ակնհայտորեն ապարդյուն չէ, հիմնավոր պատճառ չէ այդ փոխհատուցման միջոցը չսպառելու համար (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ Արհմիության հարցերով Ժնևի համայնքն ընդդեմ Շվեյցարիայի (ԱԺՀՇ)[Communaute genevoise d'action syndicale (CGAS)], § 159): Հայաստանի իրավական համակարգում, որտեղ վարչական պաշտպանության միջոցը կարող է պաշտպանություն ապահովել պետական պաշտոնյաների կողմից հիմնարար իրավունքների ենթադրյալ խախտումներից (տես, մասնավորապես, Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, վերելում հիշատակված՝ 61-րդ պարբերությունում), տուժող անհատի պարտավորությունն է ստուգել այդ պաշտպանության չափը եւ հնարավորություն տալ ներպետական դատարաններին այդ իրավունքների վերաբերյալ նախադեպային իրավունք մշակել՝ մեկնաբանության միջոցով: Դատարաններին դատական որոշումներ ընդունելու դեր վերապահելը հենց նպատակ ունի ցրել մեկնաբանման հետ կապված այդպիսի կասկածները, որոնք դեռեւս առկա են (տե՛ս վերելում հիշատակված՝ Արհմիության հարցերով Ժնևի համայնքն ընդդեմ Շվեյցարիայի (ԱԺՀՇ) [Communaute genevoise d'action syndicale (CGAS)], գործը, § 159):

127. Հաշվի առնելով ներկայացված ներպետական գործելակերպը՝ Դատարանի կարծիքով, ճանաչման հայցը, 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սկզբունքորեն կարող է համարվել արդյունավետ պաշտպանության միջոց Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման վերաբերյալ կանոնի նպատակներով այնքանով, որքանով այն վերաբերում է դիմումատուի կոնկրետ գանգատին՝ համաձայն 11-րդ հոդվածի: Քանի որ դիմումատուն չի փորձել ներկայացնել ճանաչման հայց, Դատարանը համարում է, որ նա չի ձեռնարկել համապատասխան քայլեր՝ հնարավորություն ստեղծելու ազգային դատարանների

համար կատարել իրենց հիմնարար դերը Կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող համակարգում, մասնավորապես՝ շտկել Կոնվենցիայի խախտումները իրենց իսկ իրավական համակարգի միջոցով (տե՛ս, ի թիվս այլնի, վերելում հիշատակված՝ Ղերջինայի[Gherghina] գործը, § 115):

128. Հաշվի առնելով սույն հանգամանքները՝ անհրաժեշտություն չկա դիտարկելու Կառավարության լրացուցիչ փաստարկն առ այն, որ դիմումատուն փոխհատուցման պահանջ չի ներկայացրել:

129. Դրանից հետևում է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածով նախատեսված բողոքն անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասով, եւ պետք է մերժվի՝ համաձայն 35-րդ հոդվածի 4-րդ կետի:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

130. Դիմումատուն բողոքել է, որ իրեն ազատությունից զրկելը եղել է անօրինական եւ կամայական: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի վրա, համաձայն որի՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետեւյալ դեպքերում եւ օրենքով սահմանված կարգով...»

...

բ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ դատարանի օրինական կարգադրությունը չկատարելու համար, կամ օրենքով սահմանված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով.

գ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,



...»:

#### Ա. Ընդունելիության հետ կապված մնացած հարցերը

131. Առանց ակնհայտորեն վիճարկելու այն փաստը, որ դիմումատուն չէր զրկվել իր ազատությունից, Կառավարությունը վկայակոչել է դիմումատուի ցուցմունքը (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը), որտեղ նա նշել էր, որ որեւէ մեկը նրան չէր արգելել լքել ոստիկանության բաժինը այնտեղ երեք ժամ պահվելուց հետո: Կառավարությունը վիճարկել է այն փաստը, որ ինչպես հայտնել են Շենգավիթի ոստիկանության բաժնի ոստիկանները (տե՛ս վերելում՝ 26-րդ պարբերությունը), բերման ենթարկված բոլոր անձինք ազատ էին լքելու ոստիկանության բաժինը՝ այնտեղ «բերման ենթարկվելու» պահից երեք ժամվա ընթացքում: Այսպիսով, դիմումատուի ոստիկանական կալանքի ժամկետը չի գերազանցել երեք ժամը:

132. Դիմումատուն պնդել է, որ Ազատության հրապարակի մոտակայքում իր ձերբակալության պահից մինչև Կախվածությունների բուժման ազգային կենտրոնից (ԿԲԱԿ) իր ազատումը, այն է՝ ժամը 5:00-ից մինչև 5:30 ընկած ժամանակահատվածից մինչև մոտ ժամը 13:30-ն, ինքը զրկված է եղել ազատությունից (եւ ցանկացած պարագայում՝ նստացույցը ցրելուց կես ժամ անց):

133. Դատարանը նշում է, որ այն հարցը, թե արդյոք ոստիկանների վերահսկողության ներքո գտնվելու ժամանակահատվածը (ենթադրաբար ավելի քան երեք ժամ տեւողությամբ) համարվում է «ոչ ֆակտո» ազատազրկում, սերտորեն կապված է իր այն բողոքի հետ, որ նրա ձերբակալությունն անօրինական է եղել եւ այդպիսով պետք է կցված լիներ գործի էությանը:

134. Դատարանը նաեւ նշում է, որ սույն բողոքը ոչ ակնհայտորեն անհիմն է, ոչ էլ անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է ճանաչվի ընդունելի:

## Բ. Ըստ էության քննությունը

### 1. Կողմերի փաստարկները

#### ա) Դիմումատուն

135. Դիմումատուն գանգատվում էր, որ իր ազատազրկումն անհիմն է եղել եւ չի արձանագրվել: Նա համարում էր, որ ինքը գանգվածային ձերբակալության զոհ է դարձել՝ առանց ողջամիտ կասկածի կամ առանց անհատական վերլուծության առայն, որ նրա սեփական գործողությունները կրում էին քրեական բնույթ: Նա ձերբակալվել է մոտ ութ ժամ պահվել է ոստիկանությունում՝ առանց որեւէ իրավական հիմքի: Մասնավորապես, թեւ նրան զրկել էին ազատությունից խուլիգանության հիմքով, նրան ավելի ուշ հարցաքննել են վկայի կարգավիճակում: Այնուամենայնիվ, ՔԴՕ-ի 86-րդ հոդվածի 1-ին մասով (վկայի սահմանումը) եւ 205-րդ հոդվածի 1-ին մասով (անձին հարցաքննության հրավիրելու ընթացակարգը սահմանելը) սահմանված կարգով նրան որպես վկա հարցաքննելու նպատակով ոստիկանությունը պետք է նրան ձերբակալելու փոխարեն հրավիրած լիներ: Դիմումատուն վկայակոչել է իր ձերբակալման փաստաթղթերում առկա հակասությունները (այն է՝ երկու տարբեր փաստաթղթերում նրա ազատազրկման համար նշված են երկու տարբեր հիմքեր): Մասնավորապես նրան ոստիկանության բաժին բերման ենթարկելու վերաբերյալ արձանագրությունը վերաբերում էր նրա մասնակցությանը խուլիգանությանը՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, մինչդեռ նրա իրավունքների գրավոր պարզաբանումը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածում (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը):

136. Հետագայում, երբ դիմումատուն ոստիկանությանը եւ ՔԿ-ին հարցրել է իր ազատազրկման հիմքերի մասին, պարզ է դարձել, որ նրա դեմ որեւէ քրեական վարույթ չի հարուցվել, եւ որ նա հարուցված քրեական գործերի մասով որեւէ կարգավիճակ չի ունեցել (տե՛ս վերելում՝ 21-րդ եւ 22-րդ պարբերությունները): Հետեւաբար, ըստ դիմումատուի՝ խուլիգանության գործը հարուցվել էր՝ արդարացնելու համար գանգվածային ձերբակալությունը, որի զոհ էին դարձել

հարյուրավոր ցուցարարներ: Ըստ էության, երկու հարյուր ձերբակալված ցուցարարներից որեւէ մեկին չեն հետապնդել խուլիգանության մեղադրանքով: Ըստ Կառավարության կողմից առաջ բերվող փաստարկների՝ խաղաղ ցույցի յուրաքանչյուր մասնակից հնարավոր հանցագործ էր, որը կարող էր ձերբակալվել խուլիգանության կասկածանքով:

### բ) Կառավարությունը

137. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուին ազատությունից զրկելու փաստը հիմնված էր հանցագործություն, այն է՝ խուլիգանություն կատարելու կասկածանքի վրա (ինչպես սահմանված է Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով. տե՛ս վերելում՝ 44-րդ պարբերությունը): 2015 թվականի հունիսի 22-ին ոստիկանությունը ցուցարարների կողմից ենթադրյալ խուլիգանական հանցագործության կատարման փաստով հարուցել է թիվ 14203515 քրեական գործը՝ հաշվի առնելով նրանց կողմից երթեւեկությունը խոչընդոտելու եւ աղմկոտ խռովություն առաջացնելու փաստը՝ այդպիսով խախտելով հասարակական կարգը (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Այսպիսով, հանցագործությունների կամ այլ իրավախախտումների կանխարգելումը կամ վաղ կանխարգելումն ապահովելու նպատակով որոշ ցուցարարներ «բերման են ենթարկվել» ոստիկանության բաժին (համաձայն Ոստիկանության մասին օրենքի 2-րդ եւ 11-րդ հոդվածների՝ սահմանելով հանցագործությունների եւ այլ իրավախախտումների դեմ պայքարում ոստիկանության նպատակները եւ պարտականությունները. տե՛ս, օրինակ, վերելում՝ 70-րդ եւ 71-րդ պարբերություններում հիշատակված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը եւ 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը)՝ պարզելու համար, թե արդյոք նրանց գործողությունները ներառում էին խուլիգանության տարրեր: Դիմումատուն «բերման է ենթարկվել» ոստիկանության բաժին խուլիգանության կասկածանքով, քանի որ վերջինս փախել էր ոստիկաններից. դիմումատուի փախուստի փորձը բավարար էր, որպեսզի ոստիկանությունը մտածեր, որ նա հանցանք է գործել: Ավելին, ոստիկանության բաժնում

ձերբակալության հետ կապված բոլոր համապատասխան փաստաթղթերը կազմվել են երեք ժամվա ընթացքում: Նրանք պնդել են, որ համաձայն ՔԴՕ-ի 131-րդ հոդվածի (տե՛ս վերելում՝ 52-րդ պարբերությունը)՝ ձերբակալության վերաբերյալ արձանագրությունը պետք է կազմվեր անձին քրեական վարույթ իրականացնող մարմին ներկայացնելուց հետո երեք ժամվա ընթացքում:

138. Կառավարությունը վերահաստատել է նրանց՝ վերելում ամփոփված պնդումն այն մասին (տե՛ս վերելում՝ 131-րդ պարբերությունը), որ դիմումատուի՝ ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում անցկացրած ժամանակը չի գերազանցել երեք ժամը:

## 2. Դատարանի գնահատականը

### ա) Արդյոք դիմումատուն ազատազրկված է եղել

#### i) Ընդհանուր սկզբունքները

139. Դատարանն ամենից առաջ վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է Կոնվենցիայի իմաստով «դեմոկրատական հասարակության» առաջնային կարեւորության իրավունքը, այն է՝ ազատության եւ անվտանգության հիմնարար իրավունքը (տե՛ս Սելահաթին Դեմիրթաշի [Selahattin Demirtaş] գործը՝ վերելում հիշատակված, § 311): Հռչակելով «ազատության իրավունքը»՝ 5-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում է անձի ֆիզիկական ազատությանը, որի նպատակն է ապահովել, որ որեւէ մեկը կամայականորեն չզրկվի այդ ազատությունից: Այն չի վերաբերում տեղաշարժման ազատության սահմանափակումներին. այդպիսի սահմանափակումները կարգավորվում են թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածով (տե՛ս Կրյանգան ընդդեմ Ռումինիայի [ՄՊ] [Creangă v. Romania], թիվ 29226/03 գործը, § 84, 2012 թվականի փետրվարի 23, եւ Ֆրիդրիխը եւ այլք ընդդեմ Լեհաստանի [Friedrich and Others v. Poland], [GC], թիվ 25344/20 գործը, § 149, 2024 թվականի հունիսի 20, եւ թվով 17 այլ գործեր): Ազատությունից զրկելու եւ ազատությունը սահմանափակելու միջեւ

տարբերությունը կայանում է չափի կամ ուժգնության, այլ ոչ թե բնույթի կամ էության մեջ (տե՛ս Օսթինը եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [Austin and Others v. the United Kingdom], թիվ 39692/09 գործը, § 57, ՄԻԵԴ 2012, եւ 2 այլ գործեր, Խլաիֆիան եւ այլք ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Khlaifia and Others v. Italy] [GC] գործը, Խլաիֆիան եւ այլք ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Khlaifia and Others v. Italy] գործը, թիվ 16483/12, § 64, 2016 թվականի դեկտեմբերի 15, եւ Դե Տոմազոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [De Tommaso v. Italy] թիվ 43395/09 գործը, § 80, ՄԻԵԴ 2017 (քաղվածքներ) եւ այնտեղ վկայակոչված գործերը):

140. Ավելին, Դատարանը գտնում է, որ ազատազրկման գաղափարը չի ներառում միայն որեւէ սահմանափակ տարածքում անձին զգալի ժամկետով պահելու օբյեկտիվ բաղադրիչը: Անձը կարող է համարվել ազատազրկված միայն այն դեպքում, երբ որպէս հավելյալ սուբյեկտիվ բաղադրիչ վերջինս օրինական համաձայնություն չի տվել կալանքին (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ Բրայանի եւ այլոց [Bryan and Others] գործը, § 62):

141. Դատարանը վերահաստատում է, որ ազատազրկումը կարող է իրականացվել տարբեր ձեւերով (տե՛ս Գուզարդին ընդդեմ Իտալիայի [Guzzardi v. Italy], 1980 թվականի նոյեմբերի 6, § 95, սերիա Ա, թիվ 39): Դատարանն իրեն պարտավորված չի համարում ներպետական մարմինների իրավական եզրակացությունների մասով առ այն, թե արդյոք տեղի է ունեցել ազատազրկում, եւ իրականացնում է իրավիճակի անկախ գնահատում (տե՛ս վերելում հիշատակված՝ Խլաիֆիայի [Khlaifia] § 71, Կրյանգայի [Creangă], § 92, գործերը, տե՛ս նաեւ վերելում հիշատակված՝ Վալերիան Դրագոմիրն ընդդեմ Ռումինիայի [Valerian Dragomir v. Romania], թիվ 51012/11 գործը, § 67, 2014 թվականի սեպտեմբերի 16, Չամանսն ու Տիմոֆեյեւան ընդդեմ Լատվիայի [Čamans and Timofejeva v. Latvia] թիվ 42906/12 գործը, §108, 2016 թվականի ապրիլի 28, եւ Բրայանի եւ այլոց [Bryan and Others] գործը, § 62):

142. Որոշելու համար, թե արդյոք անձը զրկվել է ազատությունից, ամենից առաջ անհրաժեշտ է հաշվի առնել նրա կոնկրետ իրավիճակը, ինչպէս նաեւ մի շարք չափանիշներ, ինչպիսիք են տվյալ միջոցի տեսակը, տեւողությունը եւ

արդյունքը, ինչպես նաև դրա իրականացման կարգը (տե՛ս վերելում հիշատակված՝ Խլաիֆիայի [Khlaifia] գործը, § 64): Դատարանը կարելոբում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են արգելված տարածքը լքելու հնարավորությունը, տվյալ անձի շարժումների նկատմամբ վերահսկողության եւ հսկողության աստիճանը, տվյալ անձի մեկուսացած լինելու աստիճանը եւ արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու հնարավորությունը (տե՛ս վերելում հիշատակված՝ Գուզարդիի [Guzzardi] գործը, § 95, վերելում հիշատակված՝ Ֆրիդրիխի եւ այլոց [Friedrich and Others] գործը, § 151, եւ Հ.Մ.-ն ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 39187/98, § 45, ՄԻԵԴ 2002-II):

143. Դատարանը գտել է, որ դիմումատուի ֆիզիկական անհարմարության եւ հեռանալու անհնարինության պայմաններում ոստիկանության կողմից իրենց լիազորությունները կատարելիս կիրառվող հարկադրանքի տարրը վկայում է ազատագրկման մասին (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված՝ Ֆրիդրիխի եւ այլոց [Friedrich and Others] գործը, §§155, 165, 170, 175 եւ 182), վերելում հիշատակված՝ Չամանսի եւ Տիմոֆեյևայի [Čamans and Timofejeva] գործը, §112, եւ Խալիկովան ընդդեմ Ադրբեյջանի [Khalikova v. Azerbaijan], թիվ 42883/11, § 102, 2015 թվականի հոկտեմբերի 22, համեմատի՛ր նաև վերելում հիշատակված՝ Օսթինի եւ այլոց [Austin and Others] գործը՝ 64-րդ կետում): Հարկադրանքի տարրի մասով Դատարանը գտել է, որ ձեռնաշղթաներ կամ ֆիզիկական զսպման այլ միջոցներ չկիրառելու հանգամանքը որոշիչ չէ ազատագրկման առկայությունը հաստատելիս (տե՛ս վերելում հիշատակված՝ Ֆրիդրիխի եւ այլոց [Friedrich and Others] գործը, § 155, եւ այնտեղ հիշատակված գործերը, համեմատի՛ր նաև վերելում հիշատակված՝ Չամանսի եւ Տիմոֆեյևայի [Čamans and Timofejeva] գործը, § 113):

*ii) Սույն գործում վերոնշյալ դրույթների կիրառումը*

1) Այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է հաշվի առնել

144. Սույն գործով Դատարանն ամենից առաջ անհրաժեշտ է համարում սահմանել այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է հաշվի առնել:

145. Սկզբնական կետի մասով, համաձայն դիմումատուի ազատագրկման վերաբերյալ նյութերի (տե՛ս վերելում՝ 23-րդ եւ 24-րդ պարբերությունները), նրան

բերման են ենթարկել Շենգավիթի ոստիկանության բաժին մոտ ժամը 6:00-ին (փաստաթղթերից մեկում նշված է՝ ժամը 6:10) (տե՛ս վերելում՝ 21-րդ պարբերությունը): Հետեւաբար, իր մոտ գտնվող նյութերի հիման վրա, Դատարանը գտնում է, որ դիմումատուի ազատագրկման մեկնարկային կետը եղել է 2015 թվականի հունիսի 23-ին՝ մոտ ժամը 6:00-ին:

146. Կողմերը իրարամերժ կարծիքներ ունեին տվյալ ժամանակահատվածի ավարտի կապակցությամբ: Մասնավորապես, առանց նշելու դիմումատուին ազատ արձակելու իրական ժամը, Կառավարությունը վիճարկում էր, որ դիմումատուն ազատ էր հեռանալու Շենգավիթի ոստիկանության բաժնում ընդունվելուց երեք ժամ հետո (տե՛ս վերելում՝ 131-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, ըստ դիմումատուի՝ իրեն ազատել են միայն դեղամիջոցների հետ կապված վերոնշյալ փորձարկման նպատակով մազի եւ մեզի նմուշները ներկայացնելուց հետո (տե՛ս վերելում՝ 132-րդ պարբերությունը): Այդ կապակցությամբ, համաձայն դիմումատուի փաստարկների (որոնք Կառավարության կողմից չեն վիճարկվել), վերջին ընթացակարգային քայլը, որով ինքն անցել էր, դեղերի հետ կապած փորձարկումներն էին ԿԲԱԿ-ում, որտեղից նրան ազատել էին միայն 13:30-ին: Մինչդեռ հարցը, թե արդյոք դիմումատուն զրկված էր ազատությունից մինչեւ ԿԲԱԿ-ից նրա ազատումը, կքննարկվի ստորեւ. Դատարանը գտնում է, որ հաշվի առնվելիք ժամանակահատվածն ավարտվել է 2015 թվականի հունիսի 23-ին՝ ժամը 13:30-ին:

2) Արդյո՞ք դիմումատուին նշված ժամանակահատվածում ոստիկանության բաժնում պահելը հավասարազոր էր ազատագրկմանը:

147. Դատարանը նկատում է, որ համաձայն Կառավարության ներկայացրած փաստարկների՝ դիմումատուին զրկել են ազատությունից, եւ ոստիկանությունում պահվել է այսպես կոչված «բերման ենթարկելու» ընթացակարգի շրջանակներում, որը տեւել էր երեք ժամից ոչ ավելի: Այդ կապակցությամբ «բերման ենթարկելու»

վերաբերյալ ընթացակարգը Վճռաբեկ դատարանի կողմից առաջին անգամ պարզաբանվել է 2009 թվականին: Մասնավորապես, անձին քրեական վարույթ իրականացնող մարմին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում կազմվում է ձերբակալման արձանագրություն եւ համաձայն Վճռաբեկ դատարանի որոշման՝ անմիջապես կամ ամենաուշը մեկ ժամվա ընթացքում տվյալ անձին ծանուցվում է այդ մասին: Ավելին, չորրորդ ժամը լրանալուց հետո ազատությունից զրկված անձն օրենքի ուժով համարվում է ձերբակալված՝ նույնիսկ ձերբակալության արձանագրության բացակայության դեպքում: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ իրավասու մարմինները որոշեն ազատել նրան այդ երեք ժամվա ընթացքում, ապա կարիք չկա արձանագրություն կազմել վերջինիս ձերբակալության վերաբերյալ (տե՛ս վերելում՝ 52-րդ պարբերությունը), իսկ տվյալ անձը չի համարվի ձերբակալված՝ համաձայն ներպետական իրավունքի (տե՛ս վերելում՝ 51-րդ պարբերության մեջ նշված ձերբակալության հասկացությունը): Ավելին, տվյալ ժամանակահատվածում նա «բերման ենթարկված» անձի կարգավիճակ ուներ (եզրույթ, որն ամրագրվել է Վճռաբեկ դատարանի կողմից, տե՛ս վերելում՝ 77-րդ պարբերությունը):

148. Դատարանը նախկինում քննել էր Մուշեղ Սաղաթեյանի գործով «բերման ենթարկելու» կարգը (վերելում հիշատակված): Տվյալ գործի կապակցությամբ Դատարանը նշել է.

«170. ... ՔԴՕ-ի՝ Կառավարության կողմից հիշատակված հոդվածներից որեւէ մեկը կամ իրապես ՔԴՕ-ի որեւէ այլ հոդված չի պարունակում որեւէ դրույթ «բերման ենթարկված անձի» ենթադրյալ կարգավիճակի վերաբերյալ, այդ թվում՝ չի պարունակում որեւէ բացատրություն տվյալ հասկացության եւ այդ կարգավիճակից բխող այլ իրավունքների եւ պարտականությունների մասին: ՔԴՕ-ի կողմից ընդունված՝ հանցանքի կասկածանքով ձերբակալված անձի միակ պաշտոնական կարգավիճակը կասկածյալի՝ ՔԴՕ-ի 62-րդ հոդվածով սահմանված կարգավիճակն է (տե՛ս վերելում՝ 101-րդ պարբերությունը): Դատարանն այնուհետեւ նշում է, որ ՔԴՕ-ի միակ հոդվածը, որով սահմանվում է «բերման ենթարկելու» կարգը, 153-րդ հոդվածն է, որը, այնուամենայնիվ, չի կիրառվում հանցանքի կասկածանքով բերման ենթարկված անձանց նկատմամբ եւ վերաբերում է այլ իրավիճակի՝ այն է, երբ անձը հարկադրաբար բերվում է քննչական մարմին՝ վերջինիս կանչերից հետո չներկայանալու հետեւանքով (տե՛ս վերելում՝ 110-րդ պարբերությունը): Ոչինչ չի վկայում, որ



այդ հոդվածը կիրառելի է եղել դիմումատուի գործի նկատմամբ, ինչը նաեւ չի ենթադրվել կողմերի կողմից:

171. Ճիշտ է, որ ՔԴՕ-ի 180-րդ հոդվածի 2-րդ մասում, որի վրա հիմնվել է Կառավարությունը, նաեւ նշվում է հանցանք կատարելու մեջ կասկածվող «անձին բերման ենթարկելու» հնարավորության մասին (տե՛ս վերելում՝ 111-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, այդ հոդվածն ամենից առաջ վերաբերում էր հատկապես այն դեպքերին, երբ հանցագործությունների մասին հաղորդումները քննելու նպատակով հրավիրել են համապատասխան մարմինների՝ ի տարբերություն դիմումատուի մոտ ստեղծված այն իրավիճակի, որի դեպքում անձը բերման է ենթարկվել հանցանք կատարելու ուղղակի կասկածի հիման վրա: Հետեւաբար հարց է առաջանում, որ այդ դրույթը, որն առավել եւս երբեւէ չի հիշատակվել դիմումատուին ազատությունից զրկելու վերաբերյալ փաստաթղթերում, կիրառելի է եղել նրա գործում: Երկրորդ, նույնիսկ եթե ենթադրենք, որ տվյալ դրույթը կիրառելի է եղել, կասկածելի է իրավական որոշակիության սկզբունքին դրա համապատասխանությունը: Մասնավորապես պարզ չէ, թե ինչ է նշանակում «անձինք կարող են բերման ենթարկվել» հանցանքի կասկածանքով արտահայտությունը, եւ ինչ ընթացակարգ է այն ենթադրում այն դեպքում, երբ հանցանքի կասկածանքով անձին ազատությունից կարճաժամկետ զրկելու միակ ընթացակարգը ՔԴՕ-ով սահմանվում է որպէս «ձերբակալում»: Այս իմաստով 180-րդ հոդվածի 2-րդ մասի ձեւակերպումը հակասում է ՔԴՕ-ի համապատասխան այլ դրույթներին, այդ թվում՝ 6-րդ, 34-րդ, 62-րդ, 128-րդ եւ 129-րդ հոդվածներին (տե՛ս վերելում՝ 109-րդ, 100-րդ, 101-րդ, 103-րդ եւ 104-րդ պարբերությունները):

172. Դատարանը նաեւ նշում է, որ «բերման ենթարկված անձ» հասկացությունը, ինչպէս երեւում է, առաջին անգամ է մշակվել Վճռաբեկ դատարանի կողմից 2009 թվականի դեկտեմբերի 18-ի իր որոշման մեջ (տե՛ս վերելում՝ 123-րդ պարբերությունը) ... Ոչինչ չի վկայում այն մասին, որ նախքան այդ որոշումը ՔԴՕ-ի համապատասխան դրույթները, այդ թվում՝ 128-րդ եւ 180-րդ հոդվածները, առանձին կամ համակցությամբ ներպետական դատարանների կողմից մեկնաբանվել են այնպէս, որ սահմանված լինի նախնական կալանքի՝ «բերման ենթարկելու» կարգը: Դիմումատուի գործի հատուկ հանգամանքները թույլ են տալիս ենթադրել, որ նրա ազատագրկումը կատարվել է այդ կարգին համապատասխան: Մասնավորապէս միակ փաստաթուղթը, որում նշվել է, որ դիմումատուն «բերման է ենթարկվել», «բերման ենթարկելու մասին արձանագրություն» անվանմամբ արձանագրությունն է եղել՝ ձեռագիր փաստաթուղթ, որը կազմվել է դիմումատուին ռստիկանության բաժին տանելուց հետո ինչ-որ պահի (տե՛ս վերելում՝ 24-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, ՔԴՕ-ի 131.1 հոդվածի համաձայն՝ այդպիսի դեպքերում կազմվելիք միակ արձանագրությունը կասկածյալի ձերբակալման մասին

արձանագրությունն է, եւ ՔԴՕ-ում որեւէ կերպ չի հիշատակվում «Բերման ենթարկելու վերաբերյալ արձանագրության» մասին (տե՛ս վերելում՝ 106-րդ պարբերությունը): Այսպիսով, տվյալ արձանագրությունը ներպետական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր չի ունեցել...»:

149. Թեւ սույն գործում առկա դեպքերը տեղի են ունեցել Վճռաբեկ դատարանի որոշումից հետո՝ ձեւավորելով «Բերման ենթարկված անձ» հասկացությունը, տվյալ կարգը չի ամրագրվել ՔԴՕ-ում մինչեւ 2018 թվականը (տե՛ս վերելում՝ 54-րդ պարբերությունը):

150. Ցանկացած պարագայում ոչինչ չի մատնանշում, որ դիմումատուին պահել են ոստիկանությունում՝ «Բերման ենթարկելու» կարգին համապատասխան: Կառավարության փաստարկներից եւ քննության նյութերից երելում է, որ վերոնշյալ երեքժամյա ժամկետը լրանալուց հետո դիմումատուն՝ որպէս «Բերման ենթարկված անձ», պետք է ազատ արձակվեր, քանի որ այլեւս չկար որեւէ հիմնավոր կասկած դիմումատուի կողմից հանցագործություն կատարելու մասով, որով կարող էր արդարացվել նրան ոստիկանության բաժնում պահելու փաստը: Այնուամենայնիվ, որեւէ հիմք չկա ենթադրելու, որ դիմումատուն ազատ էր՝ լքելու ոստիկանության բաժինը: Փաստորեն հետաքննությունը պարզել է, որ դիմումատուին ոստիկանության բաժին բերման ենթարկելը տեւել է ավելի քան երեք ժամ (թեւ այն չէր սահմանել ազատազրկման ժամկետի իրական տեւողությունը) (տե՛ս վերելում՝ 31-րդ պարբերությունը): Ժամը 8:50՝ նրան «Բերման ենթարկելու» պահից սկսած՝ երեք ժամը լրանալուց մի փոքր առաջ, դիմումատուին տարել են ոստիկանության նույն բաժնում գտնվող քննչական կոմիտե՝ հարցաքննության նպատակով, որտեղ ժամը 9:00-ին վերջինս հրաժարվել է ցուցմունք տալ (տե՛ս վերելում՝ 21-րդ եւ 25-րդ պարբերությունները): Համաձայն դիմումատուի փաստարկների (որոնք չէին վիճարկվում Կառավարության կողմից կամ քննության եզրակացությունների հիման վրա)՝ ժամը 10:00-ի սահմաններում նրան դուրս են ուղեկցել ոստիկանության բաժնից՝ թմրանյութերի ախտորոշման թեստ անցնելու նպատակով (նույն տեղում): Այդ կապակցությամբ Դատարանը

9 Բերման ենթարկելու կարգից, ի վերջո, հրաժարվեցին 2021 թվականին՝ նոր ՔԴՕ-ի ընդունումից հետո (որն ուժի մեջ է՝ 2022 թվականից սկսած):

նշում է, որ ըստ համապատասխան ներպետական իրավունքի՝ անձին իր վիճակի վատթարացման ստուգման մեջ ներգրավելը հանցագործություն կատարած անձանց նկատմամբ կիրառվող միջոց է (տե՛ս վերոնշյալ 72-րդ պարբերությունը, տե՛ս նաեւ ՔԴՕ-ի՝ վերելում՝ 50-րդ պարբերության մեջ ներկայացված 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը՝ հանցագործության մեջ կասկածվող անձի կողմից, ի թիվս այլնի, արտաթորությունների նմուշներ հանձնելու պարտավորության վերաբերյալ): Դրանից հետեւում է, որ մինչեւ այդ պահը (այն է՝ ոստիկանության բաժին բերման ենթարկվելուց հետո չորս ժամ անց) դիմումատուն դեռեւս գտնվում էր ոստիկանության բացառիկ վերահսկողության տակ եւ ուներ կասկածյալի փաստացի կարգավիճակ (տե՛ս «կասկածյալի» սահմանումը վերոնշյալ 49-րդ պարբերության մեջ), թեւէ ձերբակալության վերաբերյալ որեւէ արձանագրություն չէր կազմվել՝ անկախ ՔԴՕ-ի 131-րդ հոդվածի ուղղակի պահանջից (տե՛ս վերելում՝ 52-րդ պարբերությունը):

151. Այդ պահին դիմումատուն եւ ուղեկցող աշխատակիցները հանդիպել են նրա փաստաբանի հետ, եւ երբ փաստաբանը վիճարկել է իր բացակայության պայմաններում դիմումատուին թմրանյութերի ախտորոշման ներկայացնելու հարցը, նրանք բոլորը վերադարձել են ոստիկանության բաժին: Դիմումատուին այնուհետեւ տարել են քննիչի աշխատասենյակ եւ նրա փաստաբանի ներկայությամբ ժամը 10:05-ի եւ 11:45-ի միջեւ ընկած ժամանակահատվածում հարցաքննել են վկայի կարգավիճակով: Այնուամենայնիվ, Կառավարությունը որեւէ բացատրություն չի ներկայացրել առ այն, թե ինչու է դիմումատուն, որն ավելի վաղ չորս ժամ շարունակ ձերբակալված է եղել հանցանք կատարելու կասկածանքով, հետագայում հարցաքննվել է վկայի կարգավիճակով: Բացի այդ, գործի նյութերի բովանդակությունից չի երեւում, որ քրեական վարույթում առկա էին այնպիսի նոր զարգացումներ, որոնք քննչական մարմնին կհուշեին, որ վերջինս կրկին դիտարկեր արձանագրության կարգավիճակը, մինչեւ ոստիկանները կփորձեին նրան տանել թմրանյութերի ախտորոշման թեստ անցնելու, որը, ինչպես նշված է վերելում, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց դեմ կիրառվող միջոց է: Ի վերջո, համաձայն դիմումատուի

փաստարկների (որոնք Կառավարության կողմից չեն վիճարկվել)՝ նույնիսկ վկայի կարգավիճակում հարցաքննվելուց եւ այնուհետեւ ավագ ծառայողի բանավոր հրահանգի հիման վրա ազատ արձակվելուց հետո նրան հետ են կանչել եւ պահել են սենյակում, որտեղից նրան թույլ չեն տվել դուրս գալ, այնուհետեւ (առանց իր փաստաբանի) նրան, ի վերջո, տարել են ԿԲԱԿ, որտեղ նա պետք է անցներ թմրանյութերի ախտորոշման թեստ (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը):

152. Դատարանը գտնում է, որ անկասկած, առկա է եղել հարկադրանքի տարրն այն միջոցներում, որոնք կիրառվել են դիմումատուի նկատմամբ, եւ որի համաձայն նրան թույլ չէին տվել հեռանալ: Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ Դատարանը գտնում է, որ թեւեւ դիմումատուին կողպեքի տակ չէին պահում (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ Վալերիան Դրագոմիրի գործը, §§ 68 եւ 70), նրան տեղափոխում էին մի աշխատասենյակից մյուսը (եւ ինչ-որ պահի նույնիսկ ազատել էին ավագ ծառայողի կողմից տրված բանավոր հրահանգի հիման վրա), նա փաստացի ազատվել է թմրանյութերի ախտորոշման նպատակով մազի եւ մեզի նմուշներ ներկայացնելուց հետո: Ճիշտ է, որ սույն գործի շրջանակներում դիմումատուն կարողացել է զանգահարել իր եղբորը եւ հարցաքննության ընթացքում նշել է, որ ոստիկաններն իրեն չեն արգելել հեռանալ (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, նա նաեւ նշել է, որ իրեն հատուկ չեն ասել, որ նա կարող է հեռանալ, եւ տպավորությունն այնպիսին էր, որ նրան իրականում չեն ասել, որ ինքն ազատ է՝ հեռանալու (նույն տեղում): Այդ կապակցությամբ, ինչպես նշվել է վերելում, ազատագրվումը չի սահմանափակվում կալանքի դասական դեպքով, որը հաջորդում է ձերբակալմանը կամ դատապարտմանը, այլ կարող է իրականացվել տարբեր ձեւերով (տե՛ս վերելում հիշատակված՝ Գուզարդիի [Guzzardi], § 95, Բրայանի [Bryan] եւ այլոց, § 63, եւ Ֆրիդրիխի [Friedrich] եւ այլոց գործերը, §150): Դատարանը գտնում է, որ շփոթմունքն առաջացել է ոստիկանության բաժնում քառսային վիճակի պատճառով, որտեղ դիմումատուն ձերբակալվել է խուլիգանություն կատարելու ենթադրյալ կասկածանքի հիման վրա, այնուհետեւ հարցաքննվել է վկայի կարգավիճակով եւ ի վերջո, անցել է թմրանյութերի ախտորոշման թեստ,

թեև ինքն ավելի վաղ ազատվել էր ավագ ծառայողի բանավոր հրահանգի հիման վրա: Հետևաբար, բացի կարճ ժամանակահատվածից (որը տեւել էր մի քանի րոպե), երբ դիմումատուն եւ նրա փաստաբանը պետք է դուրս գային ոստիկանության բաժնից, այդ ամբողջ ժամակահատվածում (այն է՝ նրա ազատագրկման պահից մինչև մոտավորապես ժամը 13:30-ին ԿԲԱԿ-ից նրա ազատումը) դիմումատուն գտնվում էր ոստիկանության բացարձակ հսկողության ներքո, իսկ Կառավարությունը չի կարողացել ապացուցել, որ նա կարող էր հեռանալ իր ազատ կամքով՝ իրեն ազատագրկելուց երեք ժամ հետո (համեմատի՛ր Ի.Ի.-ն ընդդեմ Բուլղարիայի [I.I. v. Bulgaria], թիվ 44082/98 գործը, § 87, 2005 թվականի հունիսի 9, Օսիպենկոն ընդդեմ Ուկրաինայի [Osypenko v. Ukraine], թիվ 4634/04 գործը, §49, 2010 թվականի նոյեմբերի 9 եւ հիշատակված՝ Վալերիան Դրագոմիրի [Valerian Dragomir] գործը, § 70): Հետևաբար դրանից բխում է, որ դիմումատուն զրկվել էր ազատությունից ժամը 6:00-ից մինչև 13:30-ն ընկած ժամանակահատվածում, իսկ Կառավարության առարկությունն այն մասին, որ դիմումատուն այլևս զրկված չէր ազատությունից իրեն ոստիկանություն բերման ենթարկելուց երեք ժամ հետո (տե՛ս վերելում՝ 131-րդ պարբերությունը), պետք է մերժվի:

**բ) Արդյո՞ք դիմումատուի ազատագրկումը համապատասխանում էր Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին:**

*i) Ընդհանուր սկզբունքները*

153. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» եւ «գ» ենթակետերի վերաբերյալ հիմնական համապատասխան սկզբունքներն ամփոփված են Ս.Վ.-ն եւ Ա.Վ.-ն ընդդեմ Դանիայի գործով Մեծ պալատի որոշման մեջ [ՄՊ], թիվ 35553/12 եւ 2 այլ գործեր, §§ 73-77 եւ 79-83, 2018 թվականի հոկտեմբերի 22:

154. Դատարանը վերահաստատում է նաեւ, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որ ազատագրկումը լինի «օրինական», որը ներառում է այն պայմանը, որը կիրառվում է «օրենքով սահմանված կարգով» (նույն տեղում, § 74): Դրանով պահանջվում է, որ ցանկացած ձերբակալում կամ կալանք ունենա

իրավական հիմք ներպետական իրավունքում (տե՛ս վերելում հիշատակված՝ Սելահաթթին Դեմիրթաշի [Selahattin Demirtaş] գործը, § 313): Այնուամենայնիվ, համապատասխանությունն ազգային օրենսդրությանը բավարար չէ. 5-րդ հոդվածի 1-ին կետը հավելյալ սահմանում է, որ ազատազրկման ցանկացած դեպք պետք է ուղղված լինի անհատին կամայականությունից պաշտպանելուն: Հիմնարար սկզբունքն այն է, որ որեւէ կամայական կալանավորում չի կարող համապատասխանել 5-րդ հոդվածի 1-ին կետին. ավելին, 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված «կամայականություն» հասկացությունը դուրս է ազգային օրենսդրության անհամապատասխանության շրջանակից, այդպիսով, ազատազրկումը կարող է իրավաչափ լինել ազգային օրենսդրության տեսանկյունից, սակայն միեւնույն ժամանակ կարող է լինել կամայական եւ այդպիսով կարող է հակասել Կոնվենցիային (տե՛ս վերելում հիշատակված՝ Կրենգայի [Creangă], § 84 եւ Մուշեղ Սաղաթելյանի [Mushegh Saghatelyan] գործերը, § 164):

155. Դատարանը նաեւ հիշատակում է Մեծ պալատի որոշման մեջ նշված ընդհանուր սկզբունքները Սելահաթթին Դեմիրթաշն ընդդեմ Թուրքիայի [Selahattin Demirtaş v. Turkey] գործով (թիվ 2) (հիշատակված վերելում, §§ 314-19) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի առաջին հայեցակետով սահմանված պահանջի վերաբերյալ առ այն, որ քրեական վարույթի շրջանակներում ձերբակալությունը պետք է հիմնված լինի հանցանքի կատարման վերաբերյալ ողջամիտ կասկածի վրա (նույն տեղում, §§ 314, եւ այլն):

*ii) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ*

156. Ազատության իրավունքի բացառությունների ցանկը՝ սահմանված 5-րդ հոդվածի 1-ին կետում, սպառիչ ցանկ է, իսկ այդ բացառությունների նեղ մեկնաբանությունը համապատասխանում է տվյալ դրույթի նպատակին, այն է՝ ապահովել, որ որեւէ մեկը կամայականորեն չզրկվի իր ազատությունից (տե՛ս, ի թիվս շատ այլ գործերի, Ջուլիա Մանցոնին ընդդեմ Իտալիայի [Giulia Manzoni v. Italy] գործը, 1997 թվականի հուլիսի 1, §25, վճիռների եւ որոշումների վերաբերյալ

հաշվետվություններ 1997-IV):

157. Սույն գործով մինչդեռ դիմումատուն չի պահպանել ոստիկանության՝ ճանապարհը փակելուց զերծ մնալու վերաբերյալ հրահանգները (այդ կապակցությամբ տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունում, իր կողմից ներկայացված փաստարկները), նա ձերբակալվել է նստացույցը ցրելուց հետո, երբ հեռանում էր տվյալ տարածքից, այդպիսով, այլևս առկա չէր որեւէ պարտավորություն, որին դիմումատուն, կարելի է ասել, չէր հնազանդվել: Դրանից հետեւում է, որ դիմումատուին ոստիկանության բաժին տեղափոխելն արդարացված չէր՝ ըստ 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի երկրորդ հայեցակետի:

158. Այն պայմաններում, երբ 5-րդ հոդվածի 1-ին կետի այլ ենթակետեր չեն վերաբերում սույն գործին, անհրաժեշտ է որոշել, թե արդյոք դիմումատուի ազատազրկումը գտնվում էր 5-րդ ենթակետի 1-ին կետի «գ» ենթակետի շրջանակներում: Հատկանշական է, որ ոստիկանությունն արդարացրել է նրա ազատազրկումը՝ մեջբերելով իրենց ունեցած կասկածը նրա կողմից հանցագործություն (այն է՝ խուլիգանություն) կատարելու մասով: Թեեւ Դատարանին չեն տրամադրել համապատասխան որոշումը, ծառայողական քննության վերաբերյալ նյութերից երեւում է, որ նստացույցի օրը (այն է՝ 2015 թվականի հունիսի 22-ին) հարուցվել է թիվ 14203515 քրեական գործը ենթադրյալ խուլիգանության վերաբերյալ, որը ցուցարարների կողմից կատարվել է երթեւեկությունը խափանելու եւ աղմկոտ խռովություն առաջացնելու միջոցով՝ այդպիսով խախտելով հասարակական կարգը (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Դիմումատուն ընդունել է, որ ինքն օգնել է ճանապարհին արգելափակելու հարցում: Փաստաթուղթը, որը կազմվել է դիմումատուի ազատազրկման պահին, վերաբերում է խուլիգանության կասկածանքով նրան «բերման ենթարկելուն»: Հետեւաբար, իր առջեւ գտնվող նյութերի ամբողջականության հիման վրա, Դատարանը գտնում է, որ դիմումատուն զրկվել էր իր ազատությունից, որն իրականացվել է 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի հիման վրա, այն է՝ նրան համապատասխան իրավական մարմին բերման ենթարկելու նպատակով:

159. Կառավարությունը վկայակոչում էր Ոստիկանության մասին օրենքի 2-րդ եւ 11-րդ հոդվածները՝ որպես ազատագրկման հիմքեր (տե՛ս Կառավարության ներկայացրած փաստաթղթերը վերելում՝ 137-րդ պարբերությունում): Նրանք վիճարկում էին, որ համապատասխան հաշվետվությունները կազմվել էին դիմումատուին ոստիկանության բաժին «բերման ենթարկելուց» հետո երեք ժամվա ընթացքում: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ ինչպես սահմանված է վերելում՝ 152-րդ պարբերության մեջ, դիմումատուն մնացել է ոստիկանության բաժնում ավելի քան երեք ժամ. հետեւաբար, համաձայն ՔԴՕ-ի 131-րդ հոդվածի եւ Վճռաբեկ դատարանի որոշման (տե՛ս վերելում՝ 52-րդ եւ 77-րդ պարբերությունները)՝ ձերբակալության վերաբերյալ արձանագրությունը պետք է կազմված եւ ներկայացված լիներ նրան կա՛մ անմիջապես, կա՛մ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում: Այնուամենայնիվ, սույն գործում դա չի արվել: Դիմումատուի ազատագրկման վերաբերյալ միակ փաստաթուղթը նրան «բերման ենթարկելու» վերաբերյալ արձանագրությունն է՝ այն իրավական հիմքը, որը չի սահմանվել Կառավարության կողմից, եւ որը շատ քիչ մանրամասներ էր ներկայացնում. այն ձեւակերպված էր շատ վերացական ձեւով, չէր պարունակում որեւէ հղում քրեական իրավունքի որեւէ դրույթի կամ փաստական մանրամասների կամ ենթադրյալ հանցանքի վերաբերյալ ապացույցների մասով (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը): Կառավարության կողմից դիմումատուին ազատագրկելու վերաբերյալ ներկայացված մեկ այլ փաստաթուղթ էր դիմումատուի իրավունքներն ամրագրող գրավոր պարզաբանումը, որը, այնուամենայնիվ, վերաբերում էր դիմումատուին ոստիկանություն բերման ենթարկելու կապակցությամբ միանգամայն այլ իրավական հիմքի (այն է՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածը, տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը): Դիմումատուի ազատագրկման վերաբերյալ համապատասխան արձանագրությունները կազմելով զբաղվող ոստիկանը տվյալ անհամապատասխանությունը վերագրել է անփութությանը եւ շտապողականությանը (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Դատարանը չի կարող չնշել, որ վերոնշյալ նյութերը բավարար հստակություն չեն մտցնում դիմումատուի ազատագրկման հիմքերի մասով:



160. Դատարանը նաեւ գտնում է, որ դիմումատուի ձեռքալուծումից մոտ չորս ժամ հետո նրան կրկին հարցաքննել են՝ այս անգամ վկայի կարգավիճակով (տե՛ս վերելում՝ 24-րդ եւ 25-րդ պարբերությունները) այն քրեական գործի շրջանակներում, որը հիմք է հանդիսացել նրա ձեռքալուծման համար: Այդ համատեքստում տվյալ ամսաթվին խուլիգանությանը մասնակցելու համար «բերման ենթարկված» երկու հարյուր ցուցարարներ (տե՛ս վերելում՝ 12-րդ պարբերությունը) հետագայում հարցաքննվել են վկայի կարգավիճակով եւ ազատ են արձակվել՝ առանց նրանցից որեւէ մեկի՝ խուլիգանության մեջ մեղադրվելու: Իրադարձությունների այս հաջորդականությունը, որը զուգորդվում է դիմումատուի կողմից ենթադրաբար կատարված հանցագործության վերաբերյալ փաստացի տեղեկությունների կամ ապացույցների գրեթե իսպառ բացակայությամբ (համեմատի՛ր Մյասնիկ Մալխասյանն ընդդէմ Հայաստանի [Myasnik Malkhasyan v. Armenia], թիվ 49020/08 գործը, § 71, 2020 թվականի հոկտեմբերի 15) կասկածի տակ է դնում այն փաստը, որ դիմումատուի կողմից հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ երբեւէ առկա է եղել որեւէ հիմնավոր կասկած: Կառավարությունն իր հերթին չի նշել որեւէ փաստական հանգամանք, որը կարող էր քննչական մարմնին ստիպել զանգվածային ձեռքալուծումից անմիջապէս հետո «վկայի կարգավիճակում» հարցաքննել բոլոր երկու հարյուր ցուցարարներին:

161. Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուն զանգվածային ձեռքալուծության զոհ էր, եւ նրա գործողությունների հանցավոր լինելու վերաբերյալ որեւէ անհատականացված գնահատում չէր իրականացվել: Նրան ազատությունից զրկելու կապակցությամբ կազմված հասանելի պաշտոնական փաստաթղթերը ցույց են տալիս տարբեր իրավական հիմքեր եւ չեն պարունակում մանրամասներ՝ դիմումատուին վերագրվող փաստացի գործողությունների վերաբերյալ: Հետեւաբար չի կարելի ասել, որ դիմումատուի ձեռքալուծումը հիմնված էր հանցանք կատարելու կապակցությամբ ողջամիտ կասկածի վրա: Ավելին, ոստիկանությունում նրան բերման ենթարկելիս չի պահպանվել օրենքով նախատեսված կարգը, մինչդէռ նա փաստացի կասկածվում էր հանցագործություն կատարելու մեջ (եւ այդպիսով,

ներպետական իրավունքին համապատասխան, նա համարվում էր ձերբակալված անձ), նրա ազատագրկման կապակցությամբ ձերբակալման որեւէ արձանագրություն չի կազմվել (ինչպես պահանջվում է ՔԴՕ-ի 131-րդ հոդվածով):

162. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-րդ կետի խախտում:

#### IV. ԿՈՆՎԵՆՅՈՒՄՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

163. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանն անհրաժեշտության դեպքում որոշում է տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

#### Ա. Վնասը

164. Դիմումատուն, պահանջելով 14,000 եվրո ոչ նյութական վնասի դիմաց, Դատարանի հայեցողությանն է թողել այն որոշումը, թե արդյոք անհրաժեշտ է տվյալ վնասի համար արդարացի փոխհատուցում տրամադրել: Նա նյութական վնասի փոխհատուցման որեւէ պահանջ չի ներկայացրել:

165. Կառավարությունը վիճարկել է նշված պնդումները՝ պատճառաբանելով, որ դրանք չափազանցված են:

166. Իր գնահատումն հավասարության սկզբունքով իրականացնելով՝ Դատարանը դիմումատուին տրամադրում է 4,600 եվրո ոչ նյութական վնասի դիմաց՝ գումարած գանձման ենթակա որեւէ հարկ:

#### Բ. Ծախսերը եւ ծախքերը

167. Դիմումատուն նաեւ պահանջել է 1,300,000 ՀՀ դրամ՝ ներպետական

դատարաններում կատարված իրավական ծախսերի համար, եւ 6,971 եվրո (որը, ըստ դիմումատուի, համարժեք էր 2,900,000 ՀՀ դրամին)՝ Դատարանում կատարված ծախսերի համար:

168. Կառավարությունը վիճարկել է այդ պահանջները:

169. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք փաստացի կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ (տե՛ս Շվեյցարիայի կլիմայի ասոցիացիան եւ այլք ընդդեմ Շվեյցարիայի [ՄՊ] [Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland ] [GC], թիվ 53600/20 գործը, § 650, 2024 թվականի ապրիլի 9): Սույն գործով, հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերը եւ վերոնշյալ չափանիշները, Դատարանը մերժում է ներպետական վարույթի ընթացքում կատարված ծախսերի եւ ծախքերի պահանջը եւ ողջամիտ է համարում Դատարանում անցկացվող վարույթի ընթացքում կատարված ծախսերի համար տրամադրել 1,500 եվրո՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա որեւէ հարկ:

#### ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶՄՅՆ՝

1. Հայտարարում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-րդ կետի մասով բողոքն ընդունելի, իսկ գանգատը մնացած մասով՝ անընդունելի,

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,

3. Վճռում է, որ՝

ա) Պատասխանող պետությունը վճիռը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, վերջնական դառնալու ամսաթվից հետո երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն Պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 4 600 եվրո (չորս հազար վեց հարյուր եվրո)՝ գումարած գանձվելիք որեւէ հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 1 500 եվրո (հազար հինգ հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուից գանձվելիք որեւէ հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ,

4. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2025 թվականի փետրվարի 13-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Նախագահ՝

Քարտուղար՝

Մաթիաս Գույոմար

Վիկտոր Սոլովեյչիկ